ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

6 (10)

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6 (10), 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Գագիկ Հարությունյան

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ
Աննա Ժամկոչյան
Ռուբեն Մելքոնյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Սնակ Սարուխանյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Դիանա Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Աֆղանական պատերազմ.
իրողություններ և հեռանկարներ 3

Գագիկ Տերտերյան
Pax Americana-2, թ՞ե *Good bye, America* 11

Հայկարամ Նահապետյան
Երևան-Անկարա բանակցություններ.
ածանցյալ գործընթացներ 17

Սամվել Մարտիրոսյան
Թուրքիայի սահմանի հնարավոր բացման
տեղեկատվական համատեքստը 22

Արեստակես Սիմավորյան
Սամցխե-Ջավախքի վրացացած
հայ կաթոլիկները 27

Արա Պապյան
Գեղայի հայերը
(Անձնական դիտարկումներ, 1997թ.) 37

Կարեն Վերանյան
«Ֆրիդրիխ Հաուզ». «Անցումային
պետություններ» վարկանիշային
հետազոտությունը 2007-2009թթ. 42

ԱՖՂԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Գագիկ Հարությունյան

Բազմաբևեռ աշխարհակարգի հաստատումը երկարատև գործընթաց է և, չնայած համակարգային փոփոխություններին, միաբևեռ աշխարհակարգից ժառանգություն մնացած իրողությունները դեռևս բավական ժամանակ գերակայելու են ռազմաքաղաքական և տնտեսական զարգացումներում: Այդ հանգամանքն առավել ակնառու է իրաքյան և աֆղանական պատերազմների համատեքստում: Սակայն եթե Իրաքի խնդիրը, հաշվի առնելով պատերազմի արդյունքում այդ երկրում տեղի ունեցած անհակադարձելի փոփոխություններն, այս կամ այն չափով մոտ է ինչ-որ փուլային մի հանգուցալուծման, ապա նույնը դժվար է ասել Աֆղանստանի մասին:

«Գորշ պատերազմ»

Գլոբալ հարթությունում կան երկրներ և տարածաշրջաններ, որտեղ ընթացող զարգացումները, որոշակի նկատառումներով և պատճառներով, տեղեկատվական դաշտում լիարժեք չեն լուսաբանվում: Վերլուծաբանական հանրությունում նման տարածքներն ընդունված է անվանել «գորշ»: ԽՍՀՄ քաղաքացիների համար երկար ժամանակ դասական «գորշ» երկիր էր, օրինակ, Աֆղանստանը: Այդ երկրում «ինտերնացիոնալ օգնության» և «սոցիալիզմի հաստատման» կարգախոսների ներքո խորհրդային բանակի վարած ու մոտ 10 տարի տևած (1979-1989թթ.) պատերազմի մասին (որի ընթացքում զոհվեց մոտ 15 հազար զինծառայող, իսկ աֆղանցիների կորուստները՝ ներառյալ խաղաղ բնակչությունը, կազմեցին նվազագույնը մի քանի հարյուր հազար[1]), ԽՍՀՄ քաղաքացիները երկար ժամանակ գրեթե տեղեկացված չէին: Այն տարիներին դա վերագրում էին (հատկապես հասարակության այն հատվածը, որն ինչ–որ չափով իրազեկվում էր պատերազմի մասին «Ամերիկայի ձայն», «Բի-Բի-Սի» և այլ ռադիոկայանների միջոցով) «սովետական փակ ռեժիմի» առանձնահատկություններին: Նկատենք նաև, որ Աֆղանական պատերազմի տեղեկատվական բլոկադան վերացվեց միայն 1988–1989թթ., գորբաչովյան «պերեստրոյկայի» ժամանակ, որին և հետևեց խորհրդային զորքերի դուրսբերումն այդ երկրից:

[1] ԶԼՄ-ում երբեմն կարելի է հանդիպել մոտ մեկ միլիոն զոհերի մասին հիշատակումների, սակայն կարծում ենք, որ նման տեղեկատվությունն ավելի շուտ պրոպագանդիստական նպատակներ է հետապնդում:

Որոշ զուգահեռներ

Անցել է մոտ 20 տարի և նույն Աֆղանստանում արդեն 8 տարի է, ինչ ընթանում է հերթական հակամարտությունը: Այս անգամ ԽՍՀՄ-ի դերը ստանձնել են ԱՄՆ-ը և նրա ՆԱՏՕ–ի դաշնակիցները: Շատ չեն փոխվել նաև կարգախոսները. պատերազմն այժմ ընթանում է «ահաբեկչության դեմ պայքարի» և «ժողովրդավարության հաստատման» համատեքստում: Անշուշտ, միջազգային հանրությունը ներկայումս ավելի է իրազեկված Աֆղանստանում ընթացող զարգացումների մասին, քան նախկինում խորհրդային քաղաքացիները: Սակայն մինչև վերջերս լրատվական հոսքերի դիտարկումները ցույց էին տալիս, որ նոր աֆղանական պատերազմն, այնուամենայնիվ, անհամեմատ ավելի սակավ է լուսաբանվում ԶԼՄ-ում, քան, օրինակ, մերձավորարևելյան տարածաշրջանի գործընթացները: Այսինքն՝ տարածաշրջանը և դրա հետ միասին ընթացող հակամարտությունը վերստին ձեռք էին բերել «գորշ» կարգավիճակ: Տեղեկատվական (և ոչ միայն տեղեկատվական) առումով ստեղծված իրավիճակն ինչ-որ չափով կարելի էր նմանեցնել խորհրդային տարիների «լրատվական սովին», չնայած որ ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին, թերևս, դժվար է անվանել տոտալիտար, «փակ» երկրներ:

Միևնույն ժամանակ 2009-ից սկսած տեղեկատվական դաշտում անդրադարձներն Աֆղանստանի խնդիրներին սկսեցին անհամեմատ աճել, ինչը հիշեցնում է «պերեստրոյկայի» ժամանակատվածը: Այս առումով նկատենք, որ այսօր ԱՄՆ-ում, «լիցքաթափման» ռազմավարության համատեքստում,[2] նույնպես ընթանում է յուրօրինակ «պերեստրոյկա»: Ուշագրավ է նաև, որ 1988–1989թթ. իրավիճակն Աֆղանստանում գրեթե դուրս էր եկել խորհրդային զորքերի վերահսկումից, ինչը նույնպես բավական մոտ է ներկայումս ձևավորված իրադրությանը:

Դա պայմանավորված է նրանով, որ ամերիկացիների և նրանց դաշնակիցների դեմ գործում են ոչ միայն Թալիբանի և Ալ-Քաիդայի զինյալները. ռազմական գործողություններին ներգրավվում են նորանոր էթնիկական խմբեր և տարաբնույթ միավորումներ, որոնք զգալիորեն ակտիվացրել են իրենց գործողությունները: Լայնացել է նաև այդ գործողությունների աշխարհագրությունը. այսօր մարտերն ընթանում են ոչ միայն Աֆղանստանում, այլև Պակիստանում:

Փոխվել է զինյալների մարտավարությունը. հատկապես հրթիռների օգտագործումը և մահապարտների միջոցով ահաբեկչությունների իրագործումը (դրանք բացակայում էին խորհրդային օկուպացիայի տարիներին) նոր և բարդ իրավիճակ է ստեղծել: Ռազմական գործողություններն այսօր «տեղափոխվել» են նախկինում համեմատաբար հանգիստ խոշոր քաղաքները (բավական է հիշել վերջերս Քաբուլում ՄԱԿ-ի նստավայրի վրա կատարված

[2] Տե՛ս, մասնավորապես, *Գագիկ Հարությունյան,* «ՀՀ-Թուրքիա հարաբերությունների համատեքստը», Գլոբուս. ազգային անվտանգություն, #5 (9), էջ 3, 2009:

հարձակումը և Փեշավարի (Պակիստան) հրթիռակոծումը)։ Նման մարտավարության դեմ արևմտյան զինուժը, ինչպես ցույց է տալիս նաև Իրաքի նախադեպը, արդյունավետ հակամիջոցներ դեռևս չի մշակել։

Արդյունքում՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ–ի զինծառայողների կորուստները զգալիորեն աճում են և միայն այս տարվա հոկտեմբերին ամերիկյան բանակը կորցրել է մոտ 60 մարդ։ Չնայած Միացյալ Նահանգները 2009-ին լրացուցիչ 17 հազար զինծառայող է ուղարկել Աֆղանստան և ընթացող պատերազմի հիմնավորումով $30 մլրդ-ով ավելացրել է 2010թ. ռազմական բյուջեն, մնացած դաշնակիցների մոտ նկատվում են բարոյալքման միտումներ։ Որոշ երկրներ (օրինակ՝ Իտալիան) մտադիր են դուրս բերել այդ երկրից իրենց զորամիավորումները[3], այլ երկրներում (օրինակ՝ Գերմանիայում) աճում է հասարակական բողոքը վարվող պատերազմի դեմ։ Ընդհանրապես, պետք է արձանագրել, որ այդ պատերազմի նկատմամբ բացասական վերաբերմունքը միջազգային հանրությունում աճում է. արևմտյան ԶԼՄ-ում կարելի է հանդիպել բազմաթիվ նյութերի, որտեղ զուգահեռներ են տարվում Աֆղանական և Վիետնամական պատերազմների միջև։ Վերջինում, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ը կրեց պարտություն, որն ամերիկյան մեկնաբանները հաճախ որակում են որպես «ամոթալի»[4]։

Ինչպես հայտնի է, նման պարագաներում լուծումները փորձում են գտնել քաղաքական հարթությունում։

Հստակ անորոշություն

Այս տարվա մարտին նախագահ Օբաման հրապարակեց Աֆղանստանում և Պակիստանում ամերիկյան գործողությունների *AfPak (Afganistan* և *Pakistan* բառակապակցությունից) անվանումը ստացած ծրագիրը։ Համաձայն փաստաթղթի,

[3] Այդ համատեքստում բնութագրական է իտալական զորամիավորման հետ կապված միջադեպը։ Բացահայտվել էր, որ այդ երկրի հատուկ ծառայությունները կաշառել էին աֆղան զինյալներին, որպեսզի վերջիններս ակտիվ ռազմական գործողություններ չվարեն իտալացիների դեմ։ Տե՛ս http://www.infox.ru/accident/incident/2009/10/15/Italyanskiye_spyecsl.phtml

[4] Կարծում ենք, որ նման զուգահեռները, գուցե և արդարացի են պատերազմի հնարավոր ավարտին վերաբերող սցենարների տեսակետից, սակայն, ըստ հակամարտությունների էության, այնքան էլ հիմնավորված չեն։ ԱՄՆ-ԽՍՀՄ հակամարտության մաս հանդիսացող Վիետնամական պատերազմում, անշուշտ, առկա էին աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հայտնի նպատակներ, բայց ընդհանրական տպավորությունն այնպիսինն է, որ այն պատերազմն ավելի շուտ կրում էր մրցակցային բնույթ։ Այսինքն՝ չնայած ռազմավարական խնդիրներին և հակամարտության լայն մասշտաբներին, պատերազմող կողմերը (ԱՄՆ, ԽՍՀՄ) գլխավորապես փորձում էին լուծել ընթացիկ, օպերատիվ մակարդակի հարցեր։ Մինչդեռ աֆղանական այդ պատերազմը ձեռնարկելիս ամերիկացիներն անվիճելի գերակայություն ունեին գլոբալ հարթություններում ու մրցակցության խնդիրները այլ տերությունների հետ եթե և դիտարկվում էին, ապա միայն այս տարիներին ԱՄՆ-ում իշխող «հիպերպրեվենտիվ– գերկանխարգելիչ» դոկտրինայի համատեքստում։

Հարավային Ասիայում Միացյալ Նահանգների հիմնական նպատակներն են զինված ահաբեկչական խմբավորումների վերացումը և արդյունավետ անվտանգության համակարգի ձևավորումը: Վերլուծաբանական հանրությունում, ինչպես նաև ամերիկյան բարձր սպայակազմի որոշ շրջանակներում, զեկույցը մեկնաբանվեց հիմնականում այն ոգով, թե ԱՄՆ-ի նոր վարչակազմը, այլ ոլորտներում վերախմբագրելով Ջ.Բուշի գլոբալ ռազմավարությունը, Աֆղանստանի խնդրում առայժմ սկզբունքորեն չի փոխում դիրքորոշումը: Մասնավորապես, համաձայն Միջազգային հարաբերությունների խորհուրդի *(Council on Foreign Relations, CFR)* փորձագետ Դենիել Մարկի[5], Վաշինգտոնի քաղաքականությունը վերոնշյալ երկրների հանդեպ շարունակում է մնալ անորոշ: Ըստ փորձագետի, նոր վարչակազմի ծրագրում հստակեցված չեն ռազմական, հետախուզական և դիվանագիտական ռեսուրսների մակարդակը ու դրանց բաշխումը: Խիստ կարևորվում է նաև այն հանգամանքը, որ անորոշ են մնացել նաև *AfPak*–ի իրագործման ժամկետները: *CFR*-ի փորձագետի կարծիքով՝ Միացյալ Նահանգները պետք է փոխի իր գերակայությունները տարածաշրջանում՝ ռազմաքաղաքական օգնության և ֆինանսական հատկացումների հիմնական մասն ուղղելով ոչ թե Աֆղանստան, այլ Պակիստան, որի կայունության (հատկապես միջուկային զենքի ոլորտում) պահպանումն առավել կարևոր է[6]: Դ.Մարկը նշում է նաև, որ նյութական ռեսուրսների ներկա սղության պայմաններում, Պակիստանի հետ ավելի սերտ համագործակցությունը ռազմաքաղաքական ոլորտում պակաս ծախսատար է, քան պատերազմի վարումն Աֆղանստանում: Համարվում է, որ բոլոր պարագաներում էլ շեշտադրումները երկու երկրներում պետք է դնել զինուժի և հատուկ ծառայությունների գործողությունների, այլ ոչ «պետական շինարարության» և «սոցիալ – տնտեսական զարգացման» խնդիրների վրա:

Հատկանշական է նաև, որ ըստ *CFR*-ի փորձագետի, ամերիկյան ներկայությունը Աֆղանստանում ոչ միայն չի նպաստում իրավիճակի բարելավմանը, այլև միջազգային հանրությունում տպավորություն է ստեղծում, թե «ԱՄՆ–ը ունի գաղտնի պատճառներ» այդ երկրում մնալու համար: Նկատենք, որ վերջին հարցադրումն իրոք ակտուալ է և պետք է ընդունել, որ ներկայիս բանավեճերը *AfPak*-ի շուրջ չեն շոշափում պատերազմի իրական նպատակները:

Ռազմավարական նպատակները

Գաղտնիք չէ, որ «ահաբեկչության դեմ պայքարը» և «ժողովրդավարության հաստատումն» Աֆղանստանում կամ Պակիստանում սոսկ *PR*-ային կարգա-

[5] *Daniel Markey,* From AfPak to PakAf: A Response to the New U.S. Strategy for South Asia. A Policy Options Paper, http://www.cfr.org/publication/19125

[6] Այդ կապակցությամբ Դենիել Մարկն առաջարկում է ծրագիրը վերանվանել *PakAf:*

խոսներ են[7]: Եվ դա, անշուշտ, առաջին հերթին հայտնի է ամերիկյան արտաքին քաղաքականության ոլորտի «ուղեղային կենտրոնի»՝ *CFR*-ի փորձագետներին: Պատերազմը Հարավային Ասիայում վարվում է բացառապես ռազմավարական–աշխարհաքաղաքական հարթությունում և *CFR*-ը, խորհուրդ տալով Օբամայի վարչակազմին «թեթև» նայել «պետական շինարարության» և «սոցիալ–տնտեսական զարգացման» խնդիրներին, փաստորեն կոչ է անում չմոռանալ այդ պատերազմի իրական նպատակները: Տարածաշրջանի աշխարհագրությունը գրեթե իդեալական է ԱՄՆ հիմնական մրցակիցների՝ Չինաստանի և Ռուսաստանի (իսկ որոշ պարագաներում՝ նաև Իրանի) դեմ գործողություններ ծավալելու տեսանկյունից: Աֆղանստանում արդեն իսկ ստեղծվել է 12 ռազմակայանից բաղկացած ամերիկյան զինուժի զարգացած ենթակառուցվածք իր օդանավակայաններով և այլ կառույցներով: Սակայն խնդիրը միայն այն չէ, որ պատերազմական իրադրությունում հնարավորություն ունենալ արդյունավետ օդային և հրթիռային հարվածներ հասցնել ախոյաններին:

Գերակայումն այդ տարածաշրջանում թույլ է տալիս անմիջականորեն ազդել նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունների վրա: Ռադիկալ իսլամական գաղափարախոսության տարածումը և ահաբեկչական խմբավորումների ձևավորումն այդ հանրապետություններում նպաստում են «գունավոր հեղափոխությունների» ու այլ գործողությունների միջոցով «անկայունության գոտի» ձևավորել Ռուսաստանի հարավային սահմաններում: Նույնատիպ նկատառումներ կան նաև Չինաստանի հանդեպ:

Համաձայն բազմաթիվ աղբյուրների, դեռ մինչև 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը ԿՀՎ-ն ձգտում էր ուղղորդել իսլամական ծայրահեղականներին ավելի ակտիվորեն աջակցելու ույղուրական անջատողականությանը և վերջին անկարգությունները Սինցզյանի ինքնավար շրջանում վկայում են, որ այդ ուղղությամբ որոշակի «առաջընթաց» է նկատվում:

Խիստ կարևոր է նաև աշխարհատնտեսական–էներգետիկ գործոնը: Աֆղանստանով պետք է անցնի Կասպից-Հնդկական օվկիանոս նախատեսվող նավթամուղը, իսկ Թուրքմենստանից Հնդկաստան տանող գազամուղը (որում շահագրգռված են ամերիկյան *Unocal, Enron* և *Halliburton* ընկերությունները), ըստ դեռ չհաստատված վերջնական նախագծի, նույնպես անցնելու է Աֆղանստանով և Պակիստանով:

Սակայն, համաձայն որոշ փորձագետների, ԱՄՆ-ի ծրագրերը չեն սահմանափակվում միայն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նկատառումներով:

[7] Նույնը վերաբերում է նաև խորհրդային էքսպանսիային: Զարգացումներն Աֆղանստանի շուրջ գլխավորապես ընթացել են (մտաբերելով մասնավորապես 19-րդ դարում այդ երկրի դեմ Մեծ Բրիտանիայի վարած պատերազմները) դասական աշխարհաքաղաքական պատկերացումների շրջանակներում:

Գլոբալ օպիումային պատերազմ

Համաձայն գերմանացի քաղաքագետ Վիլյամ Էնգդհալի վարկածի[8], ԱՄՆ-ի զինուժը գտնվում է Աֆղանստանում նաև նրա համար, որպեսզի վերահսկի աշխարհի ամենախոշոր օպիումի աճեցման և առաքման աֆղանական շուկան, և օգտագործի թմրանյութերը հատկապես Ռուսաստանի դեմ, իսկ ստացված գերշահույթներն ուղղի ճգնաժամից տուժած ամերիկյան ֆինանսական համակարգի վերականգնմանը:

Նման վարկածը կարող է և լուրջ չթվալ, սակայն փաստերը խոսում են հօգուտ գերմանացի քաղաքագետի: Համաձայն տարբեր աղբյուրների (այդ թվում՝ ԱՄՆ նախագահի աշխատակազմի «Թմրանյութերի ոլորտում ազգային քաղաքականության» վարչության ղեկավարի), վերջին 1-2 տարում Աֆղանստանը մատակարարում է համաշխարհային օպիատների սև շուկայի շուրջ 90%: Ըստ ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցագործությունների վարչության *(UNODOC)* 2009թ. հրապարակած տվյալների, Ռուսաստանը դարձել է հերոինի խոշորագույն շուկա՝ սպառելով այդ թմրանյութի տարեկան արտադրանքի 20%[9]: Համաձայն ՄԱԿ-ի տվյալների, վերջին 10 տարում թմրամոլների թիվն այդ երկրում աճել է 10 անգամ և այժմ կազմում է 1,5 մլն: Ռուսաստանում տարեկան օգտագործում են 75-80տ հերոին (այսինքն՝ ավելի շատ, քան Չինաստանը՝ 45տ, և ԱՄՆ-ը ու Կանադան միասին վերցրած՝ 20տ), իսկ թմրանյութերի գնման համար ծախսվում է $13 մլրդ:

ՌԴ Պետդումայի Միջազգային հարաբերությունների կոմիտեի անդամ Սեմյոն Բաղդասարովը[10], որը Կենտրոնական Ասիայի ամենաընդունված գիտակներից է, նույնպես պնդում է, որ ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն ոչ թե պայքարում, այլ փաստացի նպաստում են թմրանյութերի աճեցմանը Աֆղանստանում: Ս.Բաղդասարովը մասնավորապես նշում է, որ 2001թ. Թալիբանի վարչախմբի իշխանության օրոք այդ երկրում հավաքում էին ընդամենը 185տ օպիում, իսկ ներկայումս 43 անգամ ավելի՝ 8000տ: Այս ամենին հավելենք, որ համաձայն Վիլիամ Էնգդհալի տվյալների, թմրանյութերի աճեցման և սպառման գլխավոր հովանավորը Աֆղանստանի ղեկավար Համիդ Կարզայն է:

Հարկ է նշել, որ «օպիումային» հոգեբանական զենքը հայտնի է դեռևս 17-րդ դարից: Հոլանդացիներն այդ թմրանյութը վաճառում էին Ինդոնեզիային համեմունքների դիմաց՝ նպատակ ունենալով այդպիսով նաև բարոյալքել ինդոնեզացիներին, որոնք դիմադրում էին հոլանդական պլանտացիաների տարածմանն իրենց երկրում: Հետագայում այդ տեխնոլոգիան իրենց համար մեծ

[8] *F. William Engdhal* The Geopolitics behind the phoney US war in Afghanistan, http://engdahl.oilgeopolitics.net./Geopolitics_Eurasia/Afghanistan/afghanistan.html

[9] http://pda.lenta.ru/news/2009/10/22/drugs

[10] http://echo.msk.ru/programs/razvorot/581516-echo.phtml

հաջողությամբ կիրառեցին նաև բրիտանացիները Չինաստանի դեմ: Առաջին (1840-1842թթ.) և Երկրորդ (1856–1860թթ.) օպիումային պատերազմների ընթացքում, թեյի ներկրման առևտրում փոխարինելով արծաթը օպիումով, նրանք կարողացան չինացիների գրեթե կեսին դարձնել թմրամոլ և այդպիսով փաստացի գրավել այդ երկիրը:

Հատկանշական է, որ այն դարաշրջանում Չինաստանի առևտրային հաշվեկշիռը պրոֆիցիտային էր, իսկ բրիտանականն ուներ խոշոր դեֆիցիտ: Օպիումային պատերազմների արդյունքում պատկերը փոխվեց: Նկատենք, որ այսօր իրավիճակը գրեթե նույնն է. ամերիկյան տնտեսությունը գտնվում է դժվարին փուլում, մինչդեռ չինականը, չնայած գլոբալ ճգնաժամին, շարունակում է աճել:

Հնարավոր հեռանկարներ

Այսօր քաղաքական դաշտում աֆղանական խնդրի շուրջ ընթացող բանավեճերը վկայում են այն մասին, որ Միացյալ Նահանգները դեռևս չի հստակեցրել իրենց հետագա քայլերն այդ տարածաշրջանում: Նկատենք, որ Ջ.Բուշի անունը կրող «հիպերպրեվենտիվ-գերկանխարգելիչ» գործողությունների դոկտրինի շրջանակներում առայսօր գործող ռազմավարությունը մշակվել էր միաբևեռ աշխարհակարգի պայմաններում, երբ ԱՄՆ-ի գերակայությունը գլոբալ հարթությունում որևիցե կասկած չէր հարուցում: Ներկայումս իրադրությունն այլ է, ինչը և թելադրում է նոր մոտեցումների մշակում: Ստեղծված իրավիճակում հնարավոր են զարգացումների մի քանի սցենարներ, որոնցից նշենք հետևյալները.

- ***«CFR-ի տարբերակ».*** ԱՄՆ-ը պահպանում է ներկայիս դիրքերը գլոբալ հարթությունում և կարողանում է բավարար չափով վերահսկել իրադրությունը Հարավային Ասիայում: Այդ պայմաններում Միացյալ Նահանգները, համաձայն *CFR-ի* դեղատոմսերի, ամրապնդվելով արդեն ստեղծված հենակայաններում, կարողանում է բանակի և հատուկ ծառայությունների միջոցով շարունակել, ըստ էության, նախկին ռազմավարությունը: Միևնույն ժամանակ գործողությունների ամերիկյան ծրագիրը կլինի նախկինի համեմատ ավելի համեստ և առանց հավակնոտ «ժողովրդավարական» կամ «գլոբալ հակաահաբեկչական» նախագծերի: Այս տարբերակում ԱՄՆ-ը, պահպանելով հնարավորությունների մի զգալի մասը, կփորձի իրագործել (գուցե և ոչ թե *AfPak*, այլ *PakAf* ձևաչափով) վերոնշյալ «***ռազմավարական նպատակները»*** և կշարունակի ***«գլոբալ օպիումային պատերազմը»***:

- ***«Վիետնամական սցենար».*** Միացյալ Նահանգները շարունակում է զիջել քաղաքական և տնտեսական դիրքերը գլոբալ հարթությունում ու դրան զուգահեռ իրադրությունը Հարավային Ասիայում անհակադարձելիորեն դուրս է գալիս վերահսկողությունից: Ամերիկյան վարչակազմը (գուցե անգամ՝ հաջորդ, իսկ նշված սխեմայով զարգացումների պարագայում, այն, հնարավոր է, կգլխավորի նույն Բարակ Օբաման, որի առաքելություններից է ԱՄՆ-ի արժանավայել «դիրքավորումը» բազմաբևեռ աշխարհակարգում), ստեղծված իրադրությունում որոշում է դուրս բերել զինված ուժերը տարածաշրջանից[11]:

Այս վերջին սցենարի պարագայում տարածաշրջանում կարող է ստեղծվել *ոչկառավարելի* քաոտիկ իրավիճակ և զարգացումները կարող են ընթանալ ամենատարբեր և անկանխատեսելի տարբերակներով: Հատկանշական է, որ նման պարագայում ռուսաստանյան փորձագետներին[12] ամենից շատ անհանգստացնում է Աֆղանստանի և Պակիստանի միավորումն իսլամական ծայրահեղականների ղեկավարությամբ: Նման զարգացումը կարող է մեծացնել նաև Հնդկաստանի հետ միջուկային հակամարտության հավանականությունը: Չպետք է նաև բացառել, որ նման սցենարը կարող է անգամ նախընտրելի լինել ԱՄՆ-ի համար[13]:

[11] Նման տարբերակը դեռևս չի նշանակում, որ ԱՄՆ-ը այդպիսով կորցնում է ռազմական հնարավորությունները Չինաստանին և Ռուսաստանին «զսպելու» տեսանկյունից: Լինելով անվիճելի առաջատար ռազմական տեխնոլոգիաների ոլորտում՝ ամերիկացիները ձգտում են աշխարհաքաղաքական պատկերացումները փոխարինել տիեզերական հրթիռային ուժերի ձևավորումով (դա ֆանտաստիկա չէ և մոտ է իրողությանը), ինչը թույլ կտա նախկինի պես «հարվածի տակ պահել» հիմնական մրցակիցներին (տե՛ս, օրինակ, *Элвин Тоффлер.* Война и антивойна, Транзиткнига, Москва, 2005).

[12] *Александр Храмчихин*, Как может взорваться Южная Азия, Три сценария индо-пакистанской войны Политический класс, #57, 2009.

[13] Տե՛ս, օրինակ, *Գագիկ Տեր-Հարությունյան*, Բազմաբևեռ աշխարհի մարտահրավերները, http://www.noravank.am/am/?page=analitics&nid=1572

PAX AMERICANA-2, ԹԵ՞ GOOD BYE, AMERICA

Գագիկ Տերտերյան

Արդի տնտեսական անկումը, ըստ որոշ նախանշանների և պետական գործիչների լավատեսական հայտարարությունների, կարծես թե հասել է «հատակին», և գլոբալ տնտեսությունը վերականգնման միտումներ է ցուցաբերում: Միևնույն ժամանակ, համաձայն ամենատարբեր կողմնորոշումներ ունեցող փորձագիտական կենտրոնների, տնտեսական անվտանգության արդի գլոբալ համակարգը շարունակում է մնալ ավելի քան անկայուն և խոցելի: Մասնավորապես, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր, տնտեսության բնագավառում Նոբելյան դափնեկիր Ջոզեֆ Սթիգլիցը համոզված է, որ ԱՄՆ տնտեսության վերականգնման հետ կապված հույսերն արդարացված չեն, և որ արդի ճգնաժամն առաջին հերթին նշանակում է ամերիկյան կապիտալիստական համակարգի փլուզում: Ըստ նրա՝ այլ երկրները պետք է կողմնորոշվեն ոչ թե դեպի ԱՄՆ, այլ ուշադրությունը կենտրոնացնեն սեփական հնարավորությունների վրա[1]: Սթիգլիցի տեսակետին համամիտ է նաև մեկ այլ ամերիկյան Նոբելյան դափնեկիր՝ Ջեյմս Բյուքենենը: Կարելի է ենթադրել, որ ստեղծված իրավիճակում հնարավոր են ֆինանսա-աշխարհատնտեսական զարգացումներ, որոնք կարող են էապես փոխել վերջին տասնամյակներում արդեն կարծրացած աշխարհաքաղաքական պատկերացումների ողջ համալիրը:

Հատկանշական է, որ դեռ վերջերս հոռետեսական կանխատեսումներում գլխավորապես դիտարկվում էին միջուկային զենքի անվերահսկելի տարածումը (որն արդեն իրողություն է դարձել) և հնարավոր միջուկային հակամարտությունների աղետալի հետևանքները (օրինակ, Հնդկաստանի և Պակիստանի միջև): Մինչդեռ այսօր տեղեկատվական դաշտում սկսել են գերակայել գլոբալ ֆինանսատնտեսական համակարգի փլուզման և դրա, երբեմն ոչ պակաս աղետալի, հետևանքների վերաբերյալ սցենարների քննարկումները:

Նկատենք, որ նման սցենարների ստեղծումը և հետագա քննարկումները (որոնք կարելի է ընդունել որպես այդ սցենարների յուրահատուկ «զարգացման» փուլ) հանդիսանում են քաղաքական մշակույթի կարևոր բաղադրամասերից և այսօր հիմնավորված քաղաքական-տնտեսական պլանավորումը դժվար է պատկերացնել առանց սցենարային տեխնոլոգիաների օգտագործման:

[1] http://fintimes.km.ru/59870

Սցենարային պլանավորում

Համարվում է, որ այս մեթոդի տեսական հիմունքները մշակվել են նախորդ դարի 60-ականներին, իսկ առաջին կիրառական նշանակության սցենարային պլանավորումն իրագործել են 1971թ. *Royal Datch Shell* նավթային ընկերության վերլուծաբանները. նրանք այդպիսով փորձում էին հաշվարկել այդ տարիներին խիստ հրատապ դարձած՝ ՕՊԵԿ-ի կողմից նավթի գների բարձրացման հնարավոր տարբերակները և կանխատեսել դրանց հետևանքերը: Պետք է ընդգծել, որ սցենարային մշակումները պարունակում են փորձագիտական կանխատեսումներ կատարելու բազմաթիվ տարրեր[2]: Միևնույն ժամանակ, սցենարային պլանավորումն ուղղված չէ միայն ապագայի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորմանը: Այն գլխավորապես թույլ է տալիս ենթադրել, թե այս կամ այն իրադրությունում (որը կարող է պատահել ապագայում կամ էլ առկա է արդեն այսօր) ինչպիսի քաղաքական, տնտեսական և այլ բնույթի զարգացումներ կարող են ընթանալ, և ինչպիսի հետևանքներ կունենան այդ գործընթացները:

Սցենարային մտածելակերպը թույլ է տալիս ավելի ազատորեն ուրվագծել լոկալ կամ գլոբալ զարգացումների հնարավոր, երբեմն իրարամերժ և ծայրահեղ թվացող տարբերակները: Հատկանշական է, որ սցենարային պլանավորում կատարելիս խիստ արժևորվում է փորձագետների երևակայությունը, և պատահական չէ, որ նման մշակումներին հաճախ ներգրավում են ոչ միայն տվյալ խնդրի նեղ մասնագետներին, այլև ֆանտաստ գրողների, շախմատիստների և այլ, այսպես կոչված ստեղծագործ-«կրեատիվ» անհատականությունների: Նման «ազատ» մոտեցումը հնարավոր զարգացումների նկատմամբ, ի թիվս այլ առավելությունների, թույլ է տալիս նախապես պատրաստվել ամենաանսպասելի ռազմաքաղաքական կամ տնտեսական շրջադարձերին: Նշված հանգամանքների շնորհիվ «սցենարային տեխնոլոգիաները» մեծ տարածում են գտել ոչ միայն պետական կառույցներում կամ դրանց հովանավորության տակ գործող «ուղեղային կենտրոններում», այլև խոշոր կոմերցիալ ընկերություններում:

Գոյություն ունեն սցենարային մշակումների տարբեր մեթոդներ, սակայն, որպես կանոն, դրանք ենթադրում են հետևյալ քայլերի կատարումը.

1. հնարավորինս հստակեցվում է իրադրության զարգացման ընդհանուր ֆոնը, և այդ ենթատեքստում առանձնացվում են այն իրադարձությունները, որոնք իրագործվելու մեծ հավանականություն ունեն,
2. որոշվում են այն գործոնները և պարամետրերը, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն տվյալ իրադարձության զարգացման վրա,

[2] Տե՛ս, մասնավորապես, *Գագիկ Հարությունյան,* «Ապագայի ձևավորումը», Գլոբուս. ազգային անվտանգություն, #4(8), էջ 3, 2009:

3. հնարավորության սահմաններում որոշվում են վերոնշյալ գործոնների և պարամետրերի ծայրագույն նշանակությունները կամ, այլ խոսքերով, դրանց հնարավորինս մեծ և հակառակը՝ փոքր ներգործման չափերը,
4. հիշատակված պարամետրերի և գործոնների որոշակի տրամաբանական համադրումների արդյունքում ձևավորում են այն հնարավոր սցենարները, որոնց իրագործման հավանականությունը գնահատվում է առավել բարձր կամ, առնվազն, տեսականորեն չի բացառվում:

Դոլարի արժեզրկման հետ կապված սցենարներ

Սցենարային պլանավորումը նախկինում հանդիսանում էր արևմտյան փորձագետների մենատիրությունը, մինչդեռ ներկայումս կարելի է հանդիպել նաև այլ, օրինակ, ռուսաստանյան հետազոտությունների: Մասնավորապես, մասնագիտական շրջանակներում լուրջ հետաքրքրություն է առաջացրել Դ.Մոտորինի և համահեղինակների[3] վերջերս հրապարակած աշխատությունը, որտեղ ներկայացված են դոլարի արժեզրկման հնարավոր մեխանիզմներին և հետևանքներին նվիրված սցենարներ: Դրանք համարվում են բավական իրատեսական և ներկայումս լայնորեն քննարկվում են այլ, այդ թվում՝ ամերիկյան, վերլուծաբանների կողմից: Համաշխարհային հիմնական արտարժույթի արժեզրկման վերաբերյալ հիմնադրույթի հենքում, մասնավորապես, դրված են հետևյալ թեզերը.

- դա չի հակասում տնտեսական կամ հասարակական զարգացման որևէ օրինաչափության,
- այդ բնույթի գործընթացները, ինչպես ցույց են տալիս հատկապես վերջին ճգնաժամին նվիրված բազմաթիվ վերլուծությունները, մեծ հավանականությամբ նախապես պլանավորվում և իրագործվում են ուժի որոշակի կենտրոնների կողմից:

Pax Americana – 2, Կղզի Ամերիկա և «Չիմերիա»

Այս անունները կրող սցենարներից առաջինի դեպքում համառոտ դիտարկենք այն տարբերակը, երբ ԱՄՆ-ը, ելնելով որոշակի հանգամանքներից, ինքն է հարուցում դոլարի արժեզրկումը:

Ինչպես հայտնի է, այսօր գլոբալ տնտեսության գրեթե բոլոր դերակատարներն իրենց արտարժութային ակտիվները պահում են դոլարով կամ ԱՄՆ գանձարանի փոխառություններով *(այսպես կոչված UST)*: Բնական է, որ այդ դերակատարները շահագրգռված են, որպեսզի համաշխարհային տնտե-

[3] *Денис Моторин, Валентин Бианки, Александр Серавин, Сергей Сычев,* «После *WC*: мир после кризиса» , Санкт –Петербург, 2009.

սական համակարգի հենք հանդիսացող դոլարը չփլուզվի: Օգտագործելով այս իրողությունը՝ ԱՄՆ-ը տեղեկատվական և ֆինանսական որոշակի մանիպուլյացիաների միջոցով հրահրում է, որպեսզի բոլորը սկսեն տենդորեն գնել դոլար և *UST*՝ այդպիսով իսկ առկա ֆինանսական համակարգը պահպանելու նպատակով: Բավարարելու համար իրենց կողմից ձևավորված պահանջարկը՝ ԱՄՆ-ը «ստիպված» սկսում է հսկայական քանակությամբ դոլար տպել, ինչն էլ արժեզրկում է այդ արժույթը մի քանի անգամ՝ էապես նվազեցնելով ԱՄՆ արտաքին պարտքերը և միաժամանակ սնանկացնելով միջազգային ֆինանսական հանրության բոլոր մասնակիցներին: Դրան զուգահեռ՝ ԱՄՆ-ը, ղեկավարելով այդ ողջ գործընթացը, տիրապետելով իրադրությանը և դոլարային հաստոցին, հասցնում է էժան գներով ձեռք բերել կարևորագույն արտադրական ակտիվները ողջ աշխարհում: Գործողությունների այդ համալիրի արդյունքում ԱՄՆ-ը վերականգնում է համաշխարհային գլոբալ մենատիրությունը և այդպիսով վերահաստատում միաբևեռ աշխարհակարգը. սկսվում է «երկրորդ ամերիկյան աշխարհի» (*Pax Americana – 2*) դարաշրջանը:

Վերոնշյալ սցենարի մեկ այլ ճյուղավորումում իրենց մտադրություններն իրագործելիս ամերիկացիները հանդիպում են այլ տերությունների (հատկապես՝ Չինաստանի և Եվրոպական Միության) լուրջ դիմադրությանը և չեն կարողանում լիովին իրագործել իրենց մտահղացումը, մասնավորապես, գնել ակտիվներ արտերկրում: Որպես հետևանք՝ ԱՄՆ-ը մասամբ կլուծի միայն իր ներքին խնդիրները և կվերածվի զարգացած ու փոքր-ինչ մեկուսացած պետության, սակայն առանց գերտերության հավակնությունների (*Կղզի Ամերիկա սցենարը):* Հատկանշական է, որ ամերիկյան տնտեսագետներ Չարլզ Ռաուլին և Նաթանիել Սմիթը զարգացման նմանատիպ մի սցենարն անվանում են *«Արգենտինա»* ՝ նկատի ունենալով, որ ԱՄՆ-ը իր կարգավիճակով կարող է հավասարվել լատինաամերիկյան այդ երկրին:

Ուշագրավ է այն տարբերակը, երբ այսպես կոչված «դոլարային փոշեկուլը» միացնում են ԱՄՆ-ը և Չինաստանը համատեղ: Նման պարագայում «արժեզրկում» գործողությունը հաջողությամբ է պսակվում: Հիշենք, որ Պեկինի և Վաշինգտոնի կողմից աշխարհի համատեղ «ղեկավարման», այսպես կոչված «*Չիմերիայի»*[4] վերաբերյալ սցենարների քննարկումներն աշխուժացան այս տարի հունվարից, երբ ԱՄՆ նախագահի խորհրդատու Զբիգնև Բժեզինսկին Պեկինում փաստորեն կոչ արեց ԱՄՆ-ին և ՉԺՀ-ին միասին լուծել գլոբալ հիմնախնդիրները: Նշենք, որ զարգացման նման միտումն առաջնահերթ սպառնալիք է Ռուսաստանի համար, և պատահական չէ, որ *Չիմերիայի* սցենարային ճյուղավորումներում դիտարկվում է, մասնավորապես, Չինաստանի կողմից Ռուսաստանի օգտակար հանածոներով և այլ ռեսուրսներով հարուստ սիբիրյան և հեռավորարևելյան տարածքների օկուպացիան:

[4] *Chine և America* բառակապակցությունից:

«Չիռուսիա» և Good bye, America

Թերևս, վերոնշյալ հանգամանքն է, որ թելադրում է Ռուսաստանի ղեկավարությանն ընդհանուր և հաճախ հակաամերիկյան բնույթի ընդհանրություններ փնտրել ՉԺՀ-ի հետ իր հարաբերություններում: Աշխարհաքաղաքական տեսանկյունից երկու տերություններին էլ հատկապես անհանգստացնում է ԱՄՆ դիրքերի ամրապնդումը Կենտրոնական Ասիայում, և այդ անհանգստության նյութականացված արտահայտություն կարելի է համարել ՇՀԿ ստեղծումը: Ելնելով այդ իրողություններից՝ փորձագիտական հանրությունում այսօր դիտարկվում է նաև այդ տերությունների մերձեցումը, որը որոշ մեկնաբաններ անվանում են *Արջի և Վիշապի* միություն: Այդ միությունը, ինչ-որ չափով նմանեցնելով *Չիմերիա* հաջող արտահայտության հետ, մենք կանվանենք, օրինակ՝ *Չիռուսիա*:

Արդի «սցենարիստները» հնարավոր են համարում, որ ՉԺՀ-ն և ՌԴ-ն, կատարելով համապատասխան նախապատրաստական աշխատանքներ և կանխելով ամերիկյան գործողությունները ֆինանսական շուկայում, կտրուկ սկսում են շուկա նետել իրենց կուտակած դոլարները և *UST*-ները[5]՝ զուգահեռաբար «միացնելով» դոլարային «փոշեկուլն» ու գնելով հումքային ակտիվները ողջ աշխարհում: Համաձայն սցենարային ճյուղավորումների, ԱՄՆ-ի պատասխանը կարող է արտահայտվել ռազմական գործողությունների տեսքով, որին, սակայն, դաշնակիցները նախապատրաստվել էին: Նոր աշխարհակարգում տիրում են ամենամեծ մարդկային-տնտեսական (ՉԺՀ) և տարածքային-նյութական (ՌԴ) ռեսուրսների տիրապետող տերությունները:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ը կարող է կորցնել գլոբալ առաջատարությունը ոչ միայն *Չիռուսիայի* գործողությունների շնորհիվ: Մի շարք սցենարներում (որոնք, ի դեպ, դիտարկվում են նվազագույնն արդեն 2000 թվականից), այդ գերտերության ինքնափլուզման տարբերակը կհրատապանա հատկապես այն դեպքում, եթե ԱՄՆ-ը չկարողանա կանխել ներկայիս համակարգային բնույթ կրող տնտեսական անկման գործընթացները և դրանք անկառավարելի դառնան: Օրինակ, պետական պարտքի աճման (մինչև $17 տրլն) հետ կապված՝ սկսվում են հիպերինֆլյացիա, սնանկացումներ և այլն: Արդյունքում՝ երկրում սկսվում են զանգվածային խլրտումներ և բախումներ, քաոտիկ իրավիճակի պատճառով բնակչությունը խուճապահար փախչում է երկրից և այլն: Ինչ-որ տեղ ԽՍՀՄ փլուզումը հիշեցնող այս սցենարը ստացել է *Good bye, America* անվանումը:

[5] Նշենք, որ Չինաստանի դոլարային ռեզերվներն այսօր կազմում են մոտ $2 տրլն:

Որոշ հետևություններ

Ներկայացված զարգացումներն, անշուշտ, չեն ընդգրկում հնարավոր բոլոր տարբերակները: Չպետք է բացառել նաև, որ տեղեկատվական դաշտում քննարկվող սցենարների մի մասը նպատակ ունի ընդամենը ապակողմնորոշելու միջազգային հանրությանը: Դրան զուգահեռ՝ գլոբալ դերակատարներն իրենց գործողություններով ձգտում են նպաստել իրենց համար դրական սցենարների իրագործմանը և կանխարգելել բացասականները: Նման բարդ իրադրությունում, հատկապես ՀՀ-ի նման ոչ մեծ երկրներին, խիստ դժվար է կողմնորոշվել և արդյունավետ գործել: Հասկանալի պատճառներով մեր վերլուծաբանական հանրության ճնշող մեծամասնությունը մտահոգված է տարածաշրջանային գործընթացներով, որոնք անմիջական սպառնալիք են ներկայացնում մեր ազգային անվտանգությանը: Միևնույն ժամանակ, թերևս, անհրաժեշտ է ստեղծել ենթակառույցներ, որոնք կփորձեն հետևել գլոբալ զարգացումներին և դրանց համատեքստում կատարվող սցենարային մշակումներին: Այս համատեքստում ակտուալանում են Հայության մտավոր ռեսուրսների համակարգումը և ուժի գլոբալ կենտրոններում (ԱՄՆ, ՌԴ, Եվրոպա) հայկական համայնքների ռեսուրսների միջոցով ցանցային մեթոդներով գործող հետազոտական կենտրոնների ձևավորումը: Թերևս, նման կառույցներից ստացված վերլուծությունների համադրումն է, որ թույլ կտա առավել ադեկվատ գործել ներկայիս խիստ բարդ և դինամիկ իրավիճակում:

ԵՐԵՎԱՆ-ԱՆԿԱՐԱ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հայկարամ Նահապետյան[1]

Բացի բուն հայ-թուրքական հարաբերություններում և Հայաստանում ու Սփյուռքում ծավալվող գործընթացներից, Հայաստան-Թուրքիա երկխոսության վերջին փուլի արդյունքում ի հայտ են եկել որոշակի «կողմնակի» կամ «ածանցյալ» գործընթացներ, որոնք ևս հետաքրքրական են հայկական կողմի համար: Մի քանի նախնական դիտարկումներ. վերջին շրջանում Արևմուտքում և մասնավորապես, Միացյալ Նահանգներում շեշտակի աճել է Հայաստանի հանդեպ հետաքրքրությունը թե՛ քաղաքական մակարդակով և թե՛ մամուլում: Սպիտակ տան և հատկապես Պետքարտուղարության կողմից հայտարարությունները հատկապես վերջին շրջանում բավական հաճախ են հնչում:

Մասնավորապես, վերջին շաբաթվա ընթացքում պետքարտուղարության ամենօրյա մամուլի ասուլիսների ընթացքում «պրոտոկոլների» թեմայով գրեթե յուրաքանչյուր օր նոր հայտարարություններ են արվում: «Պրոտոկոլների» ստորագրման օրը «Վաշինգտոն Փոստում» արձանագրությունների, Հայաստանում և Սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների թեմաներով միանգամից մի քանի հրապարակում լույս տեսավ: Խնդրին անդրադարձան «Նյու Յորք Թայմս», «Չիկագո Թրիբյուն», «Քրիսչըն սայնզ մոնիթոր», «Լոս Անջելես Թայմս», «Բոսթոն գլոբ» և այլ առանցքային թերթերը, *CNN*, *ABC*, *NBC* և մյուս հեռուստաալիքները: Թեման լրատվամիջոցների օրակարգում էր նաև նախընթաց շրջանում, հատկապես ՀՀ նախագահի՝ ԱՄՆ-ում գտնվելու օրերին: Ինտերնետի որոնման համակարգերի հետ աշխատելով՝ հստակ կարելի է տեսնել, որ վերջին մեկ ամսվա կտրվածքով ամերիկյան մամուլն ավելի շատ է անդրադարձել Հայաստանին, քան, օրինակ, ավանդական դաշնակից Վրաստանի Հանրապետությանը կամ ասենք Ուկրաինային: Պետք է ենթադրել, որ «պրոտոկոլներին» դեռ լուրջ «արկածներ» և «գլխացավանքներ» են սպասվում ու ամերիկյան կողմի հետաքրքրությունը դեռ այս կամ այն չափով կշարունակվի: «Նյու Յորք Թայմսի» հոկտեմբերի 11-ի հոդվածագիրը մեջբերում է անանուն ամերիկյան պաշտոնյաների վկայությունը, թե սահմանի բացումը հեռանկարային է Արևմուտքին նոր էներգատարերով ապահովելու տեսան-

[1] ԱՄՆ-ում Հայաստանի Հանրային հեռուստատեսության թղթակից:

կյունից: Անկախ «պրոտոկոլների» հանդեպ վերաբերմունքից, պետք է ընդունել, որ ձևավորվել է մի յուրօրինակ իրավիճակ, երբ Հայաստանը նորովի կարևորություն ստացավ Արևմուտքի համար:

Ըստ էության, հայ-թուրքական գործընթացը մեր տարածաշրջանում զարգանում է 2+1 ֆորմատով՝ ուղղակիորեն ներառելով Հայաստանն ու Թուրքիան և անուղղակիորեն՝ Ադրբեջանը, որը «խցկվում է» հայ-թուրքական բանակցությունների մեջ՝ շահարկելով «1 ազգ, 2 պետություն» ձևաչափը, Թուրքիայի հետ ունեցած խորքային կապերը և նավթա-գազային որոշակի ազդեցությունը: Ուշագրավ է, որ այս 3 պետություններում էլ հասարակությունը և քաղաքական դաշտը լրջագույն ու խորքային դժգոհություններ ունեն գործընթացների հանդեպ, անգամ ձևավորվել է որոշակի ճգնաժամային իրավիճակ: Գրեթե բացառիկ դեպք է, երբ 3 կողմերից 3-ում էլ խոսք է գնում ազգային շահերն անտեսելու կամ ոչ սկզբունքային լինելու, փոքր կամ նույնիսկ զրոյական ձեռքբերումների դիմաց լուրջ զոհողություններ կատարելու մասին: Երբ Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն սկսեց հանդիպումները քաղաքական կուսակցությունների հետ, Թուրքիայի Ազգայնական շարժում կուսակցության ղեկավար Դևլեթ Բահչելին ուղղակի հրաժարվեց հանդիպումից: Ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավար Դենիզ Բայքալը անթույլատրելի է համարում սահմանի բացումը նախքան Ղարաբաղյան կարգավորումը և կառավարությանը մեղադրում ստախոսության մեջ, նույն կուսակցությունից պատգամավոր Օյմենը նշում է, որ «արձանագրությունների ստորագրմամբ վերջակետ դրվեց Ղարաբաղյան հարցում Թուրքիայի սկզբունքային քաղաքականությանը»: Մեծ միասնություն կուսակցության ղեկավար Յալչընը Թոփչուն արտգործնախարարի հետ հանդիպմանը հայտարարել էր, թե Թուրքիան արձանագրությունները ստորագրել է Վաշինգտոնի ճնշման ներքո: Նրա խոսքով, թուրքական կողմը պետք է պահանջեր, որ «սահմանի վերաբացումն ընթանա Ղարաբաղից հայկական ուժերի դուրսբերմանը զուգընթաց»: Իսկ Դեմոկրատական կուսակցության ղեկավար, խորհրդարանի նախկին խոսնակ Հյուսամեթին Ջինդորուքը նշել է, որ կողմ է հայ-թուրքական կարգավորմանը, սակայն չի համաձայնում արձանագրությունների բոլոր կետերին: Պատգամավոր, նախկինում ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շյուքրյու Էլեքդաղի կարծիքով, Հայաստանի նպատակն է հասնել սահմանի բացմանը, որից հետո Երևանը կվերադառնա Ցեղասպանության վերաբերյալ պնդումներին:

Թուրքիայում դժգոհ են, որ միջնորդ է հանդես գալիս Շվեյցարիան, որը Հայոց եղեռնը ճանաչած պետություն է: Վաշինգտոնում բնակվող թուրք լոբբիստ, վերլուծաբան Էրգյուն Քըրլըքովալին *“History of Truth”* կայքում «առնտուր» տերմինի փոխարեն առաջարկում է «տուրնտուր» նորահայտ տերմինը՝ հայտարարելով, թե Թուրքիան հենց այդպիսի մի կացության մեջ է: Այն

առիթով, թե «Հայաստանը պրոտոկոլների արդյունքում կհրաժարվի ցեղասպանության պահանջներից կամ սահմանի վերաձևման հեռանկարից», Քըրլըքովալին պատասխանում է՝ ճտերն աշնանն են հաշվում: «Այժմ Ղարաբաղյան կարգավորումն առավել բարդ կլինի: Ինչո՞ւ պետք է Հայաստանն անհրաժեշտ համարի վերջ տալ իր ռազմական օկուպացիային և արտոնի ադրբեջանցի փախստականների վերադարձը, եթե արդեն ստանում է այն, ինչին ձգտում էր: Ի՞նչ տեղի կունենա, եթե մենք կորցնենք Ադրբեջանի աջակցությունը Հայաստանի հետ մթին գործարքի պատճառով, ո՞վ է լցնելու Բաքու-Ջեյհան նավթատարը», նշում է Քըրլըքովալին: Թեև քիչ հավանական է թվում, որ Բաքուն համարձակվի կասեցնել Բաքու-Ջեյհան նախագիծը, քանի որ այն շոշափում է նաև Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի հետաքրքրությունները, սակայն Թուրքիայի հանդեպ Բաքվից որոշակի էներգետիկ մահակի օգտագործումը բացառված չէ, հնարավոր է այս թեման արդեն առկա է թուրք-ադրբեջանական կուլիսային քննարկումներում: Քըրլըքովալին նկատում է, որ թուրք-հայկական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց Ադրբեջանը Մոսկվայի հետ սկսել է քննարկել ադրբեջանական գազի վաճառքի թեման: Մեջլիսի պատգամավոր Ջանան Արըթմանը գտնում է, որ պրոտոկոլները ծառայում են ոչ թե Թուրքիայի կամ Ադրբեջանի շահերին, այլ Հայաստանի:

Ադրբեջանական կողմի դժգոհությունները գրեթե քաղաքական հիստերիայի են հասնում: Նախագահ Իլհամ Ալիևը, Ադրբեջանի արտգործնախարարությունը (առնվազն երեք անգամ), փոխարտգործնախարար Արազ Ազիմովը, խորհրդարանի խոսնակ Օքթայ Ասադովը, փոխխոսնակ Զիյաֆեթ Ասքերովը, «Անա Վաթան» կուսակցության փոխղեկավար Զահիթ Օրուջը, քաղաքագետ Ռասիմ Մուսաբեկովը, չափազանց ակտիվ դեպուտատ Գանիրա Փաշանան, այլ պաշտոնյաներ ու այլ կառույցներ վերջին ամիսների ընթացքում հայտարարություններ են արել, թե սահմանի բացումը հակասում է Բաքվի շահերին և «ահազանգել» թուրք-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման հեռանկարի մասին: Օրուջը նաև կարծիք է հայտնել, որ մինչև հայ-թուրքական փաստաթղթի ստորագրումը Բաքուն իր հերթին պետք է նախաձեռներ թուրք-ադրբեջանական պրոտոկոլների ստորագրում, որում կամրագրվեր, որ Անկարան չի ձեռնարկի ոչ մի քայլ, որը կհակասի Բաքվի շահերին: Պատգամավոր Նիզամի Զաֆարովը Էրդողանին հիշեցրել է մայիսի 12-ին Բաքվում տված խոստումը, թե սահմանը չի բացվի: Լոս Անջելեսում Բաքվի հյուպատոս Էլին Սուլեյմանովը հայտարարել է, թե Թուրքիան պետք է հաշվի առնի Ադրբեջանի կարծիքը: Նման օրինակները կարելի է շարունակել:

Մեկ այլ գործընթաց, որն ածանցյալ է հայ-թուրքական բանակցություններին, Ադրբեջան-Միացյալ Նահանգներ փոխհարաբերությունների առկա վիճակն է: Հստակ է, որ Վաշինգտոնն ընդգծված հետաքրքրություն ունի հայ-

թուրքական բանակցություններում: Ադրբեջանի հակազդումը հայ-թուրքական շփումներին նշանակում է հակազդեցություն Վաշինգտոնի տարածաշրջանային հետաքրքրություններին, ինչի նկատմամբ Միացյալ Նահանգները կարող է դրսևորել իր վերաբերմունքը: Ըստ էության, Բաքուն արդեն իսկ որոշակի նախազգուշացումներ է ստացել Միացյալ Նահանգներից. նախ Բարաք Օբաման մինչև ներկա պահը չի կասեցրել 907 բանաձևը, որն արգելում է ամերիկյան ուղղակի նյութական օժանդակությունն Ադրբեջանին: Ինչպես հայտնի է, 2001թ. Կոնգրեսն ընդունեց փաստաթուղթ, որով երկրի նախագահին իրավունք տրվեց յուրաքանչյուր տարի մեկ տարի ժամկետով կասեցնել 907-ի ազդեցությունը: Ջորջ Բուշը դա կատարում էր յուրաքանչյուր տարվա հունվարին, մինչդեռ Բարաք Օբաման մինչև հոդվածի հրապարակման պահը որոշում չի կայացրել 907-ի վերաբերյալ: ԱՄՆ-ում հայկական համայնքի ներկայացուցիչները նշում են, որ հնարավոր է Սպիտակ տունը ձգտում է 907 բանաձևը վերածել «հաղթաթուղթի»՝ Ադրբեջանի նկատմամբ ճնշում կիրառելու նպատակով: Ուշագրավ է, որ ԱՄՆ Կոնգրեսի թուրքական և ադրբեջանական հարցերով հանձնախմբի անդամների զգալի մասը նույն անձինք են: Այսպիսով կոնգրեսականները հայտնվում են հակասական վիճակում: Հատկանշական է, որ կոնգրեսականները Թուրքիայի և ԱՄՆ-ի շահերի հետաքրքրությունները հաշվի առնելով՝ ժամանակ առ ժամանակ հանդես են գալիս պրոտոկոլները ողջունող հայտարարություններով, ինչը փաստացի հակասում է Բաքվի քաղաքականությանը, թեև նույն կոնգրեսմենների մի մասը միաժամանակ Ադրբեջանի բարեկամների խմբում է:

2009թ. սեպտեմբերի 18-ին Վաշինգտոնի Ջորջթաունի համալսարանում տեղի ունեցավ «ԱՄՆ-Ադրբեջան ռազմավարական գործընկերություն. նոր երկկողմ և տարածաշրջանային չափումներ» խորհրդաժողովը: Վերջինիս մասնակից Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը հայ-թուրքական բանակցությունների թեմայով իր խոսքում նշեց, որ սահմանի վերաբացումը կնշանակի ոչ միայն թուրք-ադրբեջանական, այլև Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունների վատթարացում: Հատկանշական է, որ միջոցառմանը ներկա ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ուիլիըմ Բըռնսը նույն թեմայով հայտարարեց, որ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջև շաղկապ գոյություն չունի: Միաժամանակ Բըռնսը, ինչպես նաև սրահում գտնվող նախկին պետքարտուղարի տեղակալ, Մարշալի հիմնադրամի ներկայացուցիչ Դեյվիդ Կրամերը սուր քննադատության ենթարկեցին Ադրբեջանին երկրում «Ազատություն», «Ամերիկայի ձայն», *BBC* ռադիոկայանների հեռարձակումների դադարեցման, ընդդիմադիր բլոգերներ Էմին Միլիի և Ադնան Հաջիզադեի ձերբակալության համար: Կրամերը նաև անդրադարձավ ցկյանս նախագահ

դառնալու Ալիևյան հանրաքվեին՝ հերթական քննադատության բաժինն ուղղելով Արազ Ազիմովին: Իր հերթին Ազիմովը փոխադարձ մեղադրանքներ ուղղեց ամերիկյան պետքարտուղարությանը՝ կապված 907 բանաձևի շուրջ տիրող անորոշության հետ և դժգոհեց, որ ԱՄՆ ոչ մի պետքարտուղար չի այցելել Բաքու: Չնայած հնչեղ խորագրին՝ խորհրդաժողովն ընթացավ Ադրբեջանի համար բացասական միջավայրում: Կարելի է ենթադրել, որ Ադրբեջան-ԱՄՆ հարաբերություններում փոխըմբռնման և լիարժեք բարեկամական միջավայրի առկայության պայմաններում նման երկուստեք մեղադրանքները պետք է գերիշխող չլինեին: Երկկողմ հակասությունների ամբողջական ծավալում որոշակի «մասնաբաժին» ունի նաև Վաշինգտոնի կողմից հայ-թուրքական սահմանի վերաբացմանն ուղղված լոբբիստական աշխատանքը: Միաժամանակ պետք է նշել, որ ըստ տարբեր աղբյուների, Միացյալ Նահանգներում վերջին շրջանում քննարկվում է Ադրբեջանի Գաբալայի ռադիոտեղորոշման կայանի վարձակալության ծրագիրը և նման հեռանկարը վերստին կարող է բերել ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների որոշակի սերտացման:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Սամվել Մարտիրոսյան

Հայ-թուրքական հարաբերությունների ներկա դինամիկան կարող են փոխել ՀՀ և ԼՂՀ, ինչպես նաև Սփյուռքի տեղեկատվական դաշտի ձևաչափը և բովանդակությունը:

Ադրբեջանը և Թուրքիան այսօր Հայաստանի հիմնական հակառակորդներն են տեղեկատվական դաշտում: Ընդ որում՝ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման շուրջ ծավալված զարգացումներն արդեն որոշակիորեն ձևախախտել են տեղեկատվական դաշտը: Ադրբեջանը սկսել է վարել ոչ միայն հակահայկական, այլ նաև մասամբ հակաթուրքական քարոզչություն, որը հիմնականում ուղղված է թուրքական և ադրբեջանական հասարակությանը: Սրա հետ կապված՝ որոշակիորեն թուլացել է Հայաստանի դեմ ուղղված ճնշումը:

Թուրքական ճակատն, իր հերթին, ավելի թափանցելի է դարձել Հայաստանի համար: Երկու երկրների միջև որևէ հարաբերության բացակայության պայմաններում հիմնական տեղեկատվական պայքարն ընթանում էր Թուրքիայի և նրա արբանյակների (թուրքական սփյուռքյան կազմակերպություններ, Թուրքիային աջակցող ադրբեջանական, հրեական կազմակերպություններ և այլն) ու Սփյուռքի (հիմնականում՝ արևմտահայ) միջև: Այդ շրջանում թուրքական տեղեկատվական դաշտը Հայաստանում մեծ մասամբ ընկալվում էր սփյուռքյան տեղեկատվական հոսքերի տեսանկյունից:

Այսօր իրավիճակը փոխվել է: Հայկական ԶԼՄ-ի համար թուրքական պարբերականները, կազմակերպությունները, փորձագետները *«նյուսմեյքերներ»* են դարձել: Ինտերնետից օգտվողները Հայաստանում, իրենց հերթին, սկսել են ավելի ակտիվ կարդալ թուրքական *on-line* մամուլը: Փաստորեն, հայկական տեղեկատվական դաշտն ինչ-որ չափով հայտնվել է թուրքականի ազդեցության տակ:

Ազդեցություն Հայաստան-Սփյուռք կապի վրա

Թուրքական քարոզչությունն արդեն ակտիվորեն աշխատում է այն ուղղությամբ, որ սեպ խրի Հայաստանի ու Սփյուռքի միջև: Այսօր այդ նպատակով օգտագործվում են Հայության շրջանում առկա հակասությունները հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված:

Այստեղ որպես միջնորդ հանդես է գալիս ադրբեջանական մամուլը: Ադրբեջանի միջոցով է արդեն զտված թուրքական քարոզչությունը հայտնվում հայկական դաշտում: Ադրբեջանական կողմն օգտագործում է մի շարք գործոններ, որոնցից հիմնական են համարվում երկուսը.

1. Հայկական մամուլը և ինտերնետից օգտվողները մինչև օրս որոշակի չափով կախվածության մեջ են գտնվում ադրբեջանական մամուլից, որից էլ վերցնում են տարածաշրջանային բնույթի նորությունները:
2. Լեզվի գործոնը. Հայաստանում ինտերնետից օգտվողները հիմնականում տիրապետում են ռուսերենին, ավելի քիչ՝ անգլերենին: Սրանից ելնելով՝ ադրբեջանական մամուլն ակտիվորեն անգլերենից ռուսերեն է թարգմանում թուրքական մամուլի անհրաժեշտ հատվածները՝ հայ հասարակության վրա հոգեբանական և տեղեկատվական ճնշում գործադրելու համար: Բացի այդ, ակտիվորեն օգտագործվում են նաև թուրքալեզու մամուլի նյութերը, ինչը չի վերահսկվում և ստուգվում հայկական ԶԼՄ-ի կողմից այն պարզ պատճառով, որ շատերը չէ, որ թուրքերեն գիտեն:

Այս երկու գործոնը թուրքական և ադրբեջանական մամուլին թույլ են տալիս բավական ակտիվ ազդեցություն ունենալ հայկական տեղեկատվական դաշտի վրա: Փորձ է արվում աշխատել հայ հասարակության տարբեր հատվածների մեջ պառակտում մտցնելու ուղղությամբ՝ արդեն առկա հակասությունների հիմքի վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Թուրքիայի հետ սահմանը բացելու պարագայում Հայաստանը երես առ երես կհայտնվի մեկ այլ իրականության առջև: Խոսքը Թուրքիայի հայ համայնքի մասին է: Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքը կազմված է ինչպես այն հայերից, որոնք այստեղ են մնացել դեռ Ցեղասպանության ժամանակներից, այնպես էլ ՀՀ-ից այստեղ եկածների ալիքից, Թուրքիան հնարավորություն է ստանում խաղարկել նաև թուրքական հասարակության հետ պառակտվելու խաղաթուղթը: Մանավանդ որ համայնքը բավական դժվար կացության մեջ է գտնվում և կարող է ենթարկվել թուրքական իշխանությունների ճնշումներին: Հրանտ Դինքի սպանությունից հետո արդեն պարզ դարձավ, որ հայ համայնքը Թուրքիայի իշխանությունների համար քարոզչազենք է արտաքին աշխարհում իր իմիջի ձևավոր-

ման համար: Ճիշտ նույն կերպ էլ հայկական գործոնը Թուրքիայում կարող է Հայաստանի և Սփյուռքի հասարակությունների վրա հոգեբանական ազդեցություն գործելու զենք դառնալ:

Հայկական մեդիադաշտը

Հայկական մեդիադաշտը, ինչպես արդեն նշվել է, այսօր մասամբ գտնվում է թուրքական ազդեցության ներքո: Հարկ է նկատի ունենալ, որ իրենց ունեցած ռեսուրսներով թուրքական զանգվածային լրատվամիջոցները գերազանցում են Հայաստանի ԶԼՄ-ներին:

Առաջին հնարավոր քայլը կլինի թուրքական ԶԼՄ թղթակցային կետերի ստեղծումը Հայաստանում: Ընդ որում՝ դժվար թե հայկական կողմը նույնքան օպերատիվորեն արձագանքի դրան. հայկական մամուլը խիստ կողմնորոշված է դեպի ներքաղաքական դաշտը (նույնիսկ ԼՂՀ-ում չեն ստեղծվում հայկական ԶԼՄ թղթակցային կետեր):

Երկրորդ փուլում Հայաստանում հնարավոր է թուրքական տպագիր արտադրանքի տարածում: Անգլերեն լեզվով՝ հայերի և զբոսաշրջիկների համար: Թուրքերեն լեզվով՝ Թուրքիայից հնարավոր միգրանտների համար:

Երրորդ փուլում չի կարելի բացառել, որ ստեղծվեն հայ-թուրքական համատեղ, ինչպես նաև զուտ թուրքական լրատվամիջոցներ հայերեն լեզվով:

Հայկական տեղեկատվական դաշտը պատրաստ չէ նրան, որ Թուրքիան ակտիվորեն ներխուժի այդ դաշտ, ընդ որում՝ ոչ միայն անգլերեն, այլև հայերեն լեզվով: Թուրքիայում արդեն գործում է հայալեզու ռադիո: Բացի այդ, այնտեղ հայերեն պարբերականներ են ստեղծվում նաև հայ համայնքի կողմից:

Ադրբեջանն արդեն հոկտեմբերից հայերեն նորություններ է հեռարձակում արբանյակային հեռուստաալիքով: Սակայն ադրբեջանական և թուրքական ներխուժումը հայալեզու տեղեկատվական դաշտ կտրուկ կտարբերվի որոշ բնութագրիչներով.

1. Թուրքիայում լրջորեն ուսումնասիրվում է հայկական հոգեբանությունը: Ուստի, տեղեկատվության հոսքը կլինի կշռադատված, ի տարբերություն ադրբեջանական կոպիտ քարոզչության:
2. Հայոց լեզվի ուսուցումը Թուրքիայում քաջալերվում է պաշտոնյաների շրջանում: Բացի այդ, հայ համայնքում կան շատերը, որոնք այս կամ այն կերպ համագործակցում են իշխանությունների, մամուլի հետ: Եվ այնտեղ կան ինչպես հայկական մամուլի մոնիթորինգի, այնպես էլ լավ հայերենով նյութերի ստեղծման լուրջ հնարավորություններ:

Տեղեկատվական դաշտի նման փոփոխություններին հայ հասարակությունը պատրաստ չէ: Թուրքիայի տեղեկատվական դաշտը խիստ բազմազան է, դինամիկ և շատ ավելի կոշտ մրցակցություն է պահանջում, քան նույն Ադրբեջանը:

Հնարավոր են և հակառակ գործընթացներ. հայկական լրատվամիջոցներն են սկսում թուրքերենով հեռարձակումները: Եթե ավելի վաղ մի քանի տարի գոյություն ուներ «Ազգ» օրաթերթի թուրքերեն *on-line* տարբերակը, ապա այսօր արդեն երկու ինտերնետ գործակալություն՝ *Tert.am и News.am,* իրենց լրահոսը թարգմանում են թուրքերեն: Մի կողմից՝ սա լավ հնարավորություն է թուրքական հասարակության այն հատվածի վրա ազդեցություն գործելու համար, որն անգլերեն չի կարդում: Մյուս կողմից՝ ձևավորվում է հայկական համայնքի կողմից չվերահսկվող տեղեկատվական դաշտ, որը կարող է ժամանակի ընթացքում ինֆոգեն սպառնալիք դառնալ: Հենց այն պատճառով, որ Հայաստանից դուրս են գալիս այնպիսի տեղեկատվական հոսքեր, որոնք ձևավորվում և վերահսկվում են խիստ սահմանափակ թվով մարդկանց կողմից:

Էլեկտրոնային անվտանգություն

Թուրքիայի հետ սահմանների բացումը Հայաստանի համար կարող է նշանակել նաև արտաքին աշխարհի հետ տվյալների փոխանակման միջանցքների դիվերսիֆիկացում: Հնարավոր է, որ ստեղծվեն Հայաստանից Թուրքիայի տարածքով դեպի արտաքին աշխարհ տանող օպտիկամանրաթելային երթուղիներ:

2008թ. հոկտեմբերին տեղեկատվություն հայտնվեց այն մասին, թե «Բիլայն» ընկերությունը և թուրքական հեռահաղորդակցային օպերատորը *(«Turkcell»)* բանակցություններ են վարում պահեստային ինտերնետ ալիքի ստեղծման շուրջ: Չնայած հետագայում այս տեղեկությունը հերքվեց ընկերության կողմից, ակնհայտ է, որ սահմանների բացման և բաց մրցակցության պայմաններում «թուրքական մալուխն» իսկապես կարող է իրականություն դառնալ:

Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ Թուրքիայից եկող ինտերնետ թրաֆիկը վերահսկելի է դառնալու թուրքական հատուկ ծառայությունների կողմից:

Բացի այդ, խոսքը կարող է վերաբերել նաև տվյալների փոխանակման համար թուրքական հեռահաղորդակցային արբանյակների օգտագործմանը: Հայաստանը մասամբ նման փորձ ունի: Այսպես կոչված «վիրտուալ մետաքսի ճանապարհը», որում ներգրավված են հետխորհրդային մի շարք երկրներ, մի քանի տարի Հայաստանի գիտական և կրթական կառույցներին ինտերնետը հասանելի դարձնելու համար օգտագործում էր թուրքական հաղորդակցային արբանյակը: 2002թ. արդեն գործի դրվեց *Eurasiasat-1/TurkSat-2A* արբանյակը:

Ամփոփում

Ինֆոգեն բնույթի պոտենցիալ սպառնալիքները Թուրքիայի կողմից առաջիկայում կարող են ավելանալ: Հարկ է նկատի ունենալ երկու գործոն.

- Թուրքիան առաջիկայում չի դադարի լինել Հայաստանի տեղեկատվական և քաղաքական մրցակիցը՝ անգամ արձանագրությունների ստորագրումից և դրանցում ներկայացված՝ երկու երկրների մերձեցման ծրագրերի իրականացումից հետո:
- Չնայած Թուրքիայի հետ ունեցած հակասություններին՝ Ադրբեջանը չի դադարի լինել Անկարայի դաշնակիցը: Անկարա-Բաքու քարոզչական տանդեմը կշարունակի ճնշումը Հայաստանի վրա: Կշարունակվի նաև Հայաստանի և ընդհանրապես Հայության դեմ գործող ադրբեջանական և թուրքական հաքերային խմբավորումների սերտաճումը:

Միևնույն ժամանակ, Թուրքիայի և Իսրայելի միջև շարունակվող դիմակայությունը կարող է դրական գործոն հանդիսանալ Հայաստանի համար ինչպես Թել Ավիվի հետ հնարավոր մերձեցման, այնպես էլ իսրայելական կողմի ուժգնացող ճնշման հետ կապված՝ թուրքական քարոզչամեքենայի թուլացման առումով:

Մյուս կողմից՝ տեղեկատվական դաշտի կտրուկ փոփոխությունը և աշխուժացումը կհանգեցնեն զանգվածային լրատվամիջոցների, այլընտրանքային մեդիայի արագ զարգացմանը բուն Հայաստանում, և գերակայություններն ավելի շատ արտաքին քաղաքական կլինեն, քան ներքաղաքական:

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔԻ ՎՐԱՑԱՑԱԾ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԸ

Արեստակես Սիմավորյան

Մեր օրերում հաճախակի են դարձել Հայության՝ կրոնափոխ և դավանափոխ շերտերի մասին ուսումնասիրությունները։ Մինչդեռ նրանց (իսլամացված, կաթոլիկ և բողոքական հայեր) միջավայրում տեղի ունեցող գործընթացների ու զարգացումների մասին վերլուծությունները թույլ կտան մոտավոր պատկերացում ունենալ նրանց խնդիրների մասին։

Տարբեր գործոնների պատճառով հայագիտական ուսումնասիրությունների շրջանակներից դուրս է մնում յուրահատուկ մի խումբ՝ վրացացած հայ կաթոլիկները։ Այս թեմայի ուսումնասիրությունը մեր ժամանակներում կարևոր է և հատկապես Հայության անվտանգության խնդիրների համատեքստում, քանզի տարբեր երկրներում այլ դավանանքի պատկանող և էթնիկ դիմագիծը կորցրած Հայության բեկորների նկատմամբ ոչ համապատասխան վերաբերմունքն էլ ավելի է նպաստելու վերջիններիս խորթացումը հայկական միջավայրից։

Նախապես հարկ է անդրադառնալ մի շատ կարևոր փաստի, որն ամիջականորեն շոշափում է խնդրո առարկայի միայն մի երեսը։

Հայ պատմաբանների՝ վրացացած հայ կաթոլիկների հարցի շուրջ լռությունը, հակառակ պատմական այն իրողության, որ Սամցխե-Ջավախքի ներկայիս հայ կաթոլիկների երկրորդ շերտը եկել է Արևմտյան Հայաստանից, վրաց հետազոտող փորձագետներին առիթ է տալիս նաև քաղաքական պատվեր կատարելով, վերջիններիս ներկայացնել որպես «հայացած վրացիներ»։

Քանի որ հայ կաթոլիկների վրացական ծագում ունենալու հիմնավոր, ապացուցող փաստարկները բացակայում են, կամ էլ խախուտ են դրա հիմքերը, սահմանափակվում են միայն վերագրումով, այդ կերպ շահարկելով՝ փորձում են թեմային ակտուալություն հաղորդել։ Սա վրաց ակադեմիական շրջանակների առաջնային նպատակն է։ Հայ կաթոլիկների նկատմամբ հակագիտական այս տեսակետը նաև համընդհանուր տարածում ունի վրաց հասարակության մեջ։

Վրաց պատմաբանների երկրորդ նպատակը հայ մասնագետներին, որոնք ճշմարտացիորեն, առկա փաստական նյութի քննությամբ ներկայացնում են վրացացած հայ կաթոլիկների խնդիրները, հակադարձելն է։

Սա վրացական պատմագիտության որդեգրած պաշտոնական մոտեցումն է դեռ 19-րդ դ. 60-ական թվականներից։

Այսպես, դեռևս 1860-1880-ական թվականներին վրաց եկեղեցու ներկայացուցիչները գրեթե Վրաստանի ողջ տարածքում, այդ թվում՝ Ախալցխայի և Ախալքալաքի գյուղերում, հայ կաթոլիկներին դավանափոխ անելու նպատակով մեծ շարժում էին ծավալել։ Թիրախային խումբ էին ընտրվել Ախալքալաքի շրջանի Բավրա, Խուլգումո, Կարտիկամ և Տուրցխ գյուղերի հայ կաթոլիկները։ Երբեմնի վելցիները մերժել էին վրաց հոգևորականության պահանջը։ Ինչպես վկայում են աղբյուրները, 1886թ. գավառապետ Սմբաթով իշխանը բնակչության շրջանում աշխարհագիր անցկացնելու ժամանակ փորձել է նրանց գրանցել որպես վրացիներ, սակայն ընդամենը մի տուն էր վախից վրացի գրվել, իսկ մյուսներն ասել էին, որ հայեր են[1]։

«Այդ ընտրությունը պատահական չէր։ Քարոզարշավի կազմակերպիչները վերոհիշյալ գյուղերում հաջողություն էին ակնկալում։ Նրանք կարծում էին, թե այդ գյուղերի բնակիչները, մասնակիորեն թրքախոս ու կաթոլիկ լինելով, հեշտությամբ կարող էին հակադրվել հայ առաքելականներին և ընդունել վրացադավանություն,- նշում է պատմաբան Ա.Մելքոնյանը,- ... չէր տրվում որևէ բացատրություն, թե ինչու էին վելցիները թուրքերենին զուգահեռ պահպանել հայերենը, հայկական անունները, կենցաղը, ծիսական արարողակարգը, հայկական ինքնագիտակցությունը և ինչ հիմքեր կային այդ մարդկանց «վրացի վերաածելու» համար»[2]։

Նույն բանը կրկնվեց նաև մենշևիկյան իշխանության ժամանակ։ Ազգափոխման եղկելի երևույթի մասին ժամանակին արտահայտվել է Պողոս Աբելյանը Ախալքալաքի հիմնահարցի մասին զեկուցագրում. «...ինչպես հայախոս հայ կաթոլիկներին (ներկայումս՝ 7-8 հազար), այնպես էլ տաճկախոս հայ կաթոլիկներին (թվով մոտ 9000) վրաց մենշևիկյան կառավարության օրոք ու հովանավորությամբ և վրաց մամուլի զգալի մասը և ինքը՝ մենշևիկյան կառավարությունը, զանազան խոստումներով ու ահաբեկումներով, հայտարարեցին վրացի կաթոլիկներ... Հայ կաթոլիկների մի մասը՝ անգիտակից, աղքատ, ճնշված մասը, ինքը նույնպես ինքնապահպանման բնազդից դրդված, իրեն վրացի սկսեց համարել, և շատերն իրենց ազգանունները վերաածեցին -ձե, -շվիլի վերջավորությունների։ Բայց մյուս մասը կանգ չառավ մենշևիկյան բլոկի հալածանքների դեմ և իր մարդկային արժանապատվության դեմ ոչինչ չարեց՝ նա իրեն հայ է համարել, հայ էլ համարում է»[3]։

Մինչև Խորհրդային Միության փլուզումը և դրան հաջորդող տարիներին

[1] *Հալայան Ե.,* Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 87։

[2] *Մելքոնյան Ա.,* Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդում, Երևան, 2003, էջ 226։

[3] Նույն տեղում, էջ 467-468։

վրացական մի քանի պարբերական մշտապես փորձել են հայ կաթոլիկներին համարել «հայացած վրացիներ»: 1990-ական թթ. այս միտումը շարունակվեց հատկապես վրացական ազգայնականության դրսևորմանը զուգահեռ և որոշակի խնդիրներ հարուցեց նաև գործնական հարթությունում:

Թեև վրաց հոգևորականության և իշխանությունների՝ հայ կաթոլիկներին դավանափոխ անելու ծրագիրը տապալվեց, այդուհանդերձ, այսօր էլ վրաց մի շարք պատմաբաններ, առանց ծանրակշիռ փաստարկների, հակագիտական մոտեցումներով փորձում են առաջ քաշել այն թեզը, թե Ախալքալաքի գյուղերի հայ կաթոլիկները նախկին վրացիներ են, որոնք հետագայում հայացել են:

Վերջին 10 տարում հայ կաթոլիկների մեջ «վրացի» փնտրելու ապարդյուն ջանքերն արտացոլվել են մի շարք հոդվածներում՝ տգիտության աստիճանի սխալներով:

Այսպես, 1999թ. պատմական գիտությունների դոկտոր Գուրամ Մամուլիան մասնավորապես նշում էր, որ Ախալքալաքի շրջանի ութ թրքախոս «վրացի» կաթոլիկ գյուղերի (Խուլգումո, Կարտիկամ, Տուրցխ, Կուլիկամ, Բավրա և այլն) բնակիչներն իրենց հայերի շարքին են դասել[4]:

Ինչպես երևում է, հեղինակն անտեղյակ է որոշ հարցերում. նախ՝ Կուլիկամում ոչ թե կաթոլիկներ, այլ հայ առաքելականներ են բնակվում: Եվ երկրորդ՝ Ախալքալաքի շրջանում ընդամենը 6 հայ կաթոլիկ գյուղ կա, որոնցից միայն չորսն են թրքախոս եղել, այն էլ՝ մասամբ *(ներկայումս Ջավախքում թրքախոս հայ կաթոլիկներ չկան- Ա.Ս.),* և վրացական ծագում չեն ունեցել:

2005թ. ոմն Մանանա Ջավախաշվիլի, հղում կատարելով վրացական պատմաբաններին, նշում է, որ 1893թ. ցարական իշխանությունների հրամանով վրաց կաթոլիկ եկեղեցին հայտարարվել է հայկական: Այս տեղեկությունն էլ հիմք է հանդիսացել մի նոր եզրակացության, այն է. «Վրացի կաթոլիկներին կնքել են հայ կաթոլիկ հոգևորականները՝ տալով նրանց հայկական անուններ, ինչի պատճառով սկսվել է վրաց կաթոլիկների հայացման գործընթացը»[5]:

Բնականաբար, այսօր անօգուտ է խոսել մի հարցի (հայացած վրացիների) շուրջ, ինչն իրականում գոյություն չունի: Դրա արմատական դրդապատճառը հայ մասնագետներին իրենց առաջ քաշած արհեստածին խնդիրների մեջ ներքաշելն է, ինչն էլ գիտակցաբար չի ընդունվում վերջիններիս կողմից:

[4] *Мамулия Г.,* Концепция государственной политики Грузии в отношении депортированных и репатриированных в Грузию Месхов. Общественно-политический журнал. "Центральная Азия и кавказ", № 1(2) 1999 г., http://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml:

[5] *Джавахашвили М.*, Что значит быть католиком в Грузии в XX веке, Региональная стипендиатская программа фонда им. Генриха Белля для молодых ученных на Южном Кавказе , Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа /сборник статей/', Тбилиси, Фонд им. Генриха Белля, Тбилиси, 2005, с. 112:

Անհասկանալի է, թե որտեղ են «հայացած» վրացի կաթոլիկները, որոնց փորձում են «պեղել» վրաց պատմաբանները:

Հայտնի է, որ հարավկովկասյան հանրապետությունների մեջ Վրաստանն էթնիկ բազմազանությամբ, թերևս, առաջին տեղում է, որտեղ բնակվում են տարբեր դավանանքների և կրոնների ներկայացուցիչներ:

Խորհրդային Միության կազմի մեջ մտնելուց հետո Վրաստանի էթնիկ փոքրամասնությունները շատ շուտ բռնեցին ուծացման ճանապարհը. այդ գործընթացներին կուլ գնաց փոքրաթիվ ուդիների, հույների, օսերի, ասորիների, հրեաների, հայերի ու այլ ազգությունների մի մասը:

Վրացացած հայերի մի մասն էին կազմում նաև Սամցխե-Ջավախքի, Գորիի ու Քութայիսի բնիկ հայ կաթոլիկները: Համաձայն հայ կաթոլիկների վրացացման հանգամանքներին խորագիտակ Պիոն Հակոբյանի՝ նրանց վերջնական վրացականացումը տեղի ունեցավ խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին[6]:

Քանի որ վրացացած հայ կաթոլիկների աշխարհագրական սահմանները բավական ընդարձակ են և ներառում են ամբողջական գյուղեր, անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Վարգավ: Ասպինձայի կազմում գտնվող գյուղ է, որը հարևան է հայ կաթոլիկ Վարևան և Ալաստան գյուղերին: Բնակիչները բնիկ հայեր էին: Հայտնի է, որ 17-18-րդ դդ. երկրամասը մահմեդականանում էր: Մահմեդականացմանն ընդդիմանալու համար արևմուտքից եկած և այս կողմերում հաստատված կրոնական քարոզիչների միջոցով ընդունել են կաթոլիկություն, արդյունքում՝ կաթոլիկացան վերոհիշյալ և ներկայումս անմարդաբնակ Բնելա գյուղերի հայ բնակիչները: Հետագայում վարգավցի հայ կաթոլիկները, պայմանավորված վրացիների ներհոսքով, «զոհաբերել» են մայրենի լեզուն[7]:

Ե.Լալայանը, որը ժամանակին բավական հետաքրքիր հետազոտություն էր կատարել Ջավախքի գյուղերում, նշում է. *«Վարգավցիք և խզաբավրացիք բնիկներ են: Սրանք վաղուց մոռացած են իրենց մայրենի լեզուն և խոսում են վրացերեն: Եվ թեպետ ընդունած են վրացական սովորություններ, բայց և այնպես ընտանեկան կյանքը հայկական է»*[8]:

Դա հաստատում են նաև սկզբնաղբյուրները: Համաձայն 1886թ. անցկացված ընտանեկան ցուցակագրման՝ Վարգավ գյուղի կաթոլիկների լեզուն եղել է վրացերենը, սակայն էթնիկ պատկանելության դիմաց գրվել է հայ: Օրինակ,

[6] *Հակոբեան Պ.,* Հրաւէր ողջմտութեան, Էջմիածին, 1993, էջ 86:
[7] *Կարապետյան Ս.,* Ջավախք, Երևան, 2006թ., էջ 476:
[8] *Լալայան Ե.,* նույն տեղում, էջ 84:

Լազարովները, Դաթաևները, Թարխանովները, Թամազովները, Շաբերիձե-ները: Միայն Դավլաշերիձե ընտանիքն է իրեն վրացի համարել[9]:

Միանգամայն պարզ է դառնում, որ Վարգավի բնակչության մեծ հատվածի էթնիկ ինքնագիտակցությունը դեռևս պահպանվում էր: Հաշվի առնելով այն, որ այդ մարդահամարի ժամանակ ճնշումներ են կիրառվել հայ կաթոլիկների վրա՝ տարբեր միջոցներով փորձել են նրանց վրացի գրանցել, ինչպես Սմբաթովի պարագայում էր, ակնհայտ է դառնում, որ Վարգավի բնակչության գերակշռող մասն ընդդիմացել է վրացի աշխարհագիրներին և ներկայացել որպես հայ: Նույն պատկերն էր նաև Խզաբավրայում:

Վարգավ գյուղի հարևան հայ կաթոլիկները նշում էին, որ մինչև 1930-ական թթ. վարգավցիները խոսում էին հայերեն[10]:

Խնդիրն այն է, որ վարգավցիների և խզաբավրացիների կենցաղում հայերենի իմացությունը «տեղ չուներ»: Ե.Լալայանի վերոնշյալ մեջբերումը հայերենին չտիրապետելու մասին (1890-ական թթ.) համապատասխանում է իրականությանը: Պարզապես հարևան գյուղերի բնակիչները չեն ըմբռնել, որ նրանց լեզվի իմացությունը, այն էլ՝ առանձին արտահայտություններով, կապված էր եկեղեցական ծիսական արարողությունների հետ, որոնք, բնականաբար, կատարվում էին հայերենով, չնայած սկզբում լատինածես էին: Այլ հարց է, թե արդյոք վրացերենին զուգահեռ ունեին «գաղտնի լեզու»՝ հայերենը, որով շփվում էին միայն տան անդամները: Հայերենի կատարյալ իմացությունը 1930-ական թթ., կարծում ենք, փոքր-ինչ չափազանցված է:

Վարգավցիները, ըստ Վարևանի և Ալաստանի տարեց բնակիչների, հաճախում էին իրենց գյուղերի եկեղեցիներ, տարբեր տարիներին Խերթվիսից և այլ վայրերից Վարգավում հաստատվել էին նաև մի քանի վրացական ընտանիքներ, որոնք խառնվել էին տեղաբնիկներին: Ի դեպ, 1910-ական թթ. Վարգավում հովվություն էր անում Կոստանդինոս Շեշաբերիձեն, որն ազգությամբ վրացի էր, և դժվար թե նրա օրոք ծիսական արարողությունները կատարվեին հայերենով: Օբյեկտիվորեն հայ կաթոլիկների վրացացման նախադրյալները ձևավորել են հատկապես լատինածես և վրացամետ հայ հոգևորականները:

Պատահական չէր, որ հետագայում վրացական իշխանությունները Վարգավ գյուղը մտցրին նորաստեղծ Ասպինձայի շրջանի մեջ[11]: Գյուղն ընդամենը երեք-չորս կիլոմետր է հեռու հայկական գյուղերից: Վրացիներն այդպիսով իրենց հսկողության տակ վերցրին այն՝ կտրելով հայկական միջավայրից, ինտեգրելով վրացականին:

[9] *Топчишвили Р.А.,* Посемейные списки Тифлисской губернии 1886г. как этнографический источник // СЭ 1989, N 6 с.114.

[10] *Սիմավորյան Ա.,* Ջավախքի հայ կաթոլիկ համայնքի հոգևոր-եկեղեցական խնդիրների շուրջ, «Գլոբուս, Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 5, 2009, էջ 34:

[11] Ասպինձայի շրջանը հիմնվել է 1961թ. սեպտեմբերին:

Քանի որ Ասպինձայի շրջանում հիմնականում կենտրոնացված էին վրացական գյուղեր, բացառությամբ Դամալայի, սահմանազատումն աշխատեց հօգուտ վրացիների, և վարգավցիների մոտ կրկին տիրապետող դարձավ էթնիկ վրացի լինելու հանգամանքը: Ըստ նույն հայ կաթոլիկների՝ այսօր քչերն են ընդունում, որ հայ են, նույնիսկ մի քանի ընտանիքների մայրեր, որոնք սերում են հարևան հայ կաթոլիկ Ալաստան գյուղից և ամուսնացել էին դեռ 1920-ական թթ.[12]: Մի խոսքով՝ այստեղ բնակվում են վրացախոս հայ և այլ վայրերից այստեղ տեղափոխված վրացի կաթոլիկներ: Հավելենք, որ այսօր Վարգավ գյուղը ներկայացված է որպես վրացի կաթոլիկների համայնք:

Խզաբավրա: Պատմական փաստերի համաձայն՝ այս գյուղի բնակիչներն առաքելադավան էին և Օսմանյան կայսրության օրոք, իսլամացումից խուսափելու համար, ընդունել են կաթոլիկություն: Ազգային եկեղեցուց անջատվելու հետևանքով խզաբավրացիները մեկուսացել էին հայության հիմնական զանգվածից, ինչը և նրանց վերջնականապես վրացախոս դարձրեց[13]:

Խզաբավրացիների մեջ ներքին ամուսնությունների սովորույթը ևս մեծ տեղ ուներ, ինչը յուրահատուկ էր նաև հայ կաթոլիկներին ու ձևավորվել էր դավանանքային հիմքի վրա: Այն վերջիններիս հեռու էր պահում վրաց ուղղափառներից, սակայն ժամանակի ընթացքում այդ սովորույթն այլևս տեղայնական չէր: Անցյալում խզաբավրացիների հայ լինելու հիշողությունները կամ թույլ արտահայտված ազգային ինքնագիտակցությունը հանգեցրեց նրան, որ խնամություն էին անում հայ կաթոլիկների հետ, ինչը չնչին տոկոս էր կազմում, իսկ այսօր ընդհանրապես բացակայում է: Նրանք ևս ժխտում են, որ հայ են: Պատահական չէ, որ վերջին տարիներին խզաբավրացիներն ընդդիմացել են մի շարք վրացական թերթերում իրենց հայկական ծագման վերաբերյալ հնչած կարծիքներին:

2007թ. «Ասավալ-դասավալի» վրացալեզու պարբերականի թիվ 13-ում տեղ էր գտել 87-ամյա խզաբավրացի Ստեփանե Մամուկաշվիլու հոդվածը, որտեղ ժխտում էր, որ իրենք հայկական ծագում ունեն՝ բերելով արհեստածին փաստարկներ. *«Այն ժամանակ, երբ կաթոլիկ խիզաբավրացիները ժամերգություն-պատարագները այլ գյուղերում էին կատարում, այդ ծեսի կատարումը հայ կաթոլիկ քահանաները յուրացրին, որոնք մեծ չարություններ կատարեցին: Գրել-կարդալ չիմացող վրացիներին, երեխային կնքելու ժամանակ, անունը հայերեն էին գրում. Վելիջանաշվիլիներին Վելիջանով գրեցին, Թա-*

[12] Ավելորդ չէ նշել, որ Ալաստան գյուղից Վարգավ հարս գնացած մի կնոջ երեխաներ չէին ցանկանում խնամել իրենց ծեր մորը միայն նրա համար, որ հայ է: Վեջինիս հարազատներն ստիպված են եղել նրան խնամել իր հարազատ գյուղում: Հայատյացության այսպիսի դրսևորումներից մեզ հայտնի եզակի դեպքն է (ժամանակակիցների հիշողություններից):

[13] *Կարապետյան Ս.,* նշվ.աշխ., էջ 234:

մազաշվիլիներին՝ Թամազով, Մամուկաշվիլիներին՝ Մամուկով և այլն: Երբ Խիզաբավրայում եկեղեցու կառուցումն ավարտվում էր, քարի ու փայտի վարպետները հայեր էին, որի պատճառով այդ կաթոլիկ տաճարը ուրիշ շատերի նման հայերին վերագրեցին»,- ցավում է պարոն Ստեփանեն»[14]:

Խզաբավրայի կաթոլիկ քահանաները, բացառությամբ Աստվածատուրով Հովհաննեսի (1866թ.), Կոստանդինոս Շեշաբերիձեի (1915թ.) և Պաոլո Սիեպանեկիի (1961-1999թթ.), գրեթե բոլորն էլ նույն գյուղի հայեր են եղել: Հետագայում վրացամետ լինելու պատճառով իրենց ազգանվան վերջավորությունը փոխել են վրացականով: Օրինակ, այդ գյուղի քահանան սկզբում Վարձելյան էր, հետագայում, պայմանավորված ռուսահպատակությամբ, դարձել էր Վարձելով, այնուհետև՝ Վարձելաշվիլի: Ահա թե ինչ են պատմում սկզբնաղբյուրները նրա մասին. *«...կաթոլիկ հայ էր և Վարձելեան և հայ անունով էլ քահանայ ձեռնադրուեց, բայց այժմ նոյն մարդը շապիկը փոխելով, վրացի է անուանում իրան»*[15]:

Եվ եթե հայեր չէին խզաբավրացիները, ապա ինչպե՞ս կարող է պատահել, որ Պոլսի, Կովկասի և Ալաստանի հայ կաթոլիկներն այդ գյուղի եկեղեցին հիմնովին վերակառուցելու համար գումար հանգանակեցին, երբ դրա կարիքն այնքան շատ ունեին իրենք: Վատիկանյան փաստաթղթերում էլ Խզաբավրան Սամցխե-Ջավախքի հայ կաթոլիկ գյուղերի հետ միասին նշվում է որպես հայկական[16]:

Ասպինձայի հայաբնակ Դամալա և Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղերի հայ բնակիչները փաստում են, որ երբ նրանց հայ ես ասում, ընդդիմանում են և նշում վերը բերված Մամուկաշվիլու տեսակետը: Քչերն են ընդունում իրենց հայկական ծագումը: Ինչպես երևում է, վրացական ազգանունները հայկականով փոխելու վրաց պատմաբանների կեղծ հավաստիացումներն արմատավորվել են խզաբավրացիների գիտակցությունում, և այն փոխանցվում է սերնդեսերունդ:

Առնվազն զավեշտալի է այն, որ եթե վրացի կաթոլիկներին հայացրել էին հայ քահանաները՝ փոխելով նրանց անուն-ազգանունները, ինչպես նշում է Մանանա Ջավախաշվիլին, ապա ինչպե՞ս եղավ, որ Խզաբավրայի կաթոլիկների անունների փոփոխությունից հետո նրանք չհայացան: Հայկական միջա-

[14] Грузинский маразм (часть 5), http://bagin.info/default.asp?Lang=_Ru&NewsID=626&SectionID=-1&PagePosition=1&search=%D0%BC%D0%B0%D1%80%D0%B0%D0%B7%D0%BC&mode=allwords

[15] «Մշակ», 1900, N124, էջ 2, մեջբերված է *Ս.Կարապետյան,* նշվ. աշխ., էջ 236:

[16] Directorium officii divini pro doecesi Tiranspolensi in Annum Domini, 1866, Hierarchia Romano-catholica, http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html:

վայրը չի մոռանում, որ նրանք հայկական ծագում ունեն և մշտապես, շփման ժամանակ, հիշեցնում է նրանց էթնիկ ծագման մասին. *«Մեր մասին ասում են, որ մենք հայ ենք, ես շատ հաճախ եմ լսում այդ մասին»,*- նշում է վրացի կաթոլիկ մի կին[17]:

Վերջին տարիների վրաց-ռուսական քաղաքական լարվածության համատեքստում ի հայտ եկան նոր իրողություններ: Վրացացած հայերի մի քանի սերունդ վերականգնեցին հայկական ազգանունները[18]: Սակայն մեզ հայտնի չէ, թե արդյոք այդ գործողություններում ներգրավված էր Սամցխե-Ջավախքի վրացացած հայությունը, ու թե ինչ շարունակություն կունենա այդ գործընթացը:

Թեև փաստեր չունենք, բայց պետք է որ վրացական իշխանությունները (մենշևիկյան և խորհրդային) մշտական ուշադրության կենտրոնում պահեին Սամցխե-Ջավախքում և ողջ Վրաստանում վրացացած հայության տարբեր շերտերի շրջանում տեղի ունեցող բազմաթիվ գործընթացները: Նրանք գուցե ամեն կերպ փորձել են կասեցնել վերջիններիս ազգային ինքնագիտակցության որևէ դրսևորում՝ հետագայում բարդություններից խուսափելու համար:

Որպես ազգային ինքնագիտակցության բռնի արգելակման միջոց վրացական իշխանությունների համար հզոր գործոն է հանդիսանում ուղղափառացումը, քանի որ այդ երկրում ուղղափառ լինելը համազոր է վրացի լինելուն: Եթե Վարգավ և Խզաբավրա գյուղերը զերծ են մնում ուղղափառացման հարվածներից, ապա հակառակ պատկերն է Ախալցխայի, Ադիգենի վրացացած հայ կաթոլիկների շրջանում, որոնց դավանափոխման գործընթացը մեծ չափերի է հասնում: Այդ մասին բարձրաձայնել են նաև Վատիկանի ներկայացուցիչները: Իրադրությունն ավելի պատկերավոր նկարագրելու համար մեջբերենք, այսպես կոչված, «վրացի կաթոլիկների» վերաբերյալ մի քանի փաստեր, որի մասին վկայում են հայ տեղաբնիկները:

«Իվլիտայի Աստվածամոր եկեղեցին, մեր ընտանիքում հաշվվում էր ամենազորավորը: Ես դեռ փոքրուց այնտեղ շատ եմ հաճախել, սակայն այն ժամանակ դա կաթոլիկ հայերի եկեղեցի էր, և վրացիներն այնտեղ չէին էլ գնում: Դե, ինչպես իմացել եմ մեր մեծերից, Ախալցխայի շրջանում Իվլիտան, ինչպես նաև Ադիգենում Ուդեն և Արալը, կամ էլ Խիզաբավրան (գյուղ Ասպինձայի շրջանում) եղել են կաթոլիկ հայաբնակ գյուղեր, սակայն ներ-

[17] *Джавахашвили М.,* նույն տեղում, էջ 112:

[18] 2002թ. Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով՝ այդ երկրում ապրում են 250 հազար հայեր, նաև 150 հազար վրացացած, ովքեր խորհրդային իշխանությունների և Վրաստանի անկախության առաջին տարիներին, իշխանությունների ճնշման ներքո փոխել են իրենց ազգանունները վրացականով: Գլխավորապես վրացացել են Թբիլիսիի, Կախեթի շրջանի տասնյակ գյուղեր: Սամցխե-Ջավախքում վրացացել են մեր հիշատակած Վարգավը և Խզաբավրան, իսկ Ադիգենի շրջանում՝ Բոլաջուր, Աբասթուման, Արալ, Ուդե գյուղերը: Տե՛ս Огрузинившиеся армяне возвращают свои армянские фамилии,http://www.regnum.ru/news/district-abroad/georgia/727399.html

կայումս նրանք համարվում են կաթոլիկ «վրացական», և թե դա ինչպես տեղի ունեցավ, ես մինչև հիմա չեմ էլ հասկանում»,- ասում է 73-ամյա տիկին Լուսինեն և շարունակում, որ *«վրաց կաթոլիկ» հասկացություն այս տարածաշրջանում իրականում չկա: Պարզապես նրանք այն հայերն են, ովքեր ժամանակի ընթացքում այս կամ այն պատճառով կամ էլ չդիմանալով վրացիների ճնշումներին, «փոխել» են իրենց ազգությունը և այժմ արդեն կոչվում են «վրացիներ»: Այդ պատճառով էլ առանց մեկնաբանելու ուղղափառ վրացիները «վրացի կաթոլիկներին» կոչում են դավաճաններ և վերաբերվում են ընդգծված արհամարհանքով:* Իսկ *«վրացի կաթոլիկներն» էլ, որպեսզի դուրս գան այս իրավիճակից, ստիպված են առաջնորդվել «Հռոմի պապից էլ կաթոլիկ» ասացվածքով և իրենց ձևացնել ավելի մոլեռանդ ազգայնական վրացիներ»:*

«Ես ինքս անձամբ ունեմ բարեկամներ, ովքեր այսօր համարվում են վրացիներ, սակայն չէ՞ որ փաստը մնում է փաստ, որ նրանց երակներում հոսում է Վարդանյանների արյունը, և ազգանունները փոխելով դարձել են Վարդենաշվիլի, չէ՞ որ չի կարելի փոխել ամեն ինչ»,- ասում է Ախալցխայի բնակիչ Կարապետը և ավելացնում, որ այդ դեպքից հետո իր և իր նոր «վրացի» բարեկամների հարաբերություններն այնքան էլ դրական չեն:- *«Ստեղծվել է մի իրավիճակ, որ եթե ուզում ես դառնալ պաշտոնյա կամ կյանքում հասնել ինչ-որ բանի, ուրեմն պետք է դառնաս ոչ միայն «վրացի», այլև ուղղափառ, քանի որ ես ինչքան տեսնում եմ, վրացիներն այժմ փորձում են վերացնել նախկին հայերից ձևավորված «վրացի կաթոլիկ» հասկացությունը»,*- նշում է Կարապետը[19]:

Կարծում ենք, որ այս խումբը «կորսված սերունդ» է, որի հետ աշխատելը, դժվար, գուցե և անհնար է: Հայկական արմատներին վերադառնալը պետք է ինքնաբուխ լինի, և որքան «ճնշումներ» լինեն, այնքան հաստատակամ կմնան իրենց վրացական ծագման տեսակետի մեջ:

Վրացացած հայ կաթոլիկների թեման ուսումնասիրության կարիք ունի, ընդ որում՝ տարբեր տեսանկյուններից՝ պատմական, էթնոհոգեբանական և այլն: Այս հարցը կապված է նաև մի շարք գործոնների հետ. Վրաստանի ներսում տեղի ունեցող էթնիկ խմորումները ներկայացվում են բացառապես վրացերենով, որպեսզի ուրիշներն իրենց խնդիրներին հաղորդակից չդառնան:

Սույն խնդրի խորքային ուսումնասիրությունը պահանջում է հստակ և զգուշավոր մասնագիտական մոտեցում: Ի վերջո, սեփական ինքնությունը կորցրած ցանկացած խումբ ունի թույլ կետեր, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել սեփական արմատներին վերադառնալու առավելագույն ցուցիչը:

[19] Հայկական հետքը ուղղափառների և կաթոլիկների հակադրությունում, *http://bagin.info/default.asp?Lang=_Am&NewsID=684&SectionID=1&RegionID=0&Date=08/11/2009&PagePosition=52*

Աղյուսակ 1

Վրաստանի օտարացած և անհետացած հայ կաթոլիկ համայնքները[20]

Շրջան	պատճառը
Ախալցխայի շրջան	
1. Ախալցխա (հին քաղաք) 2. Իվլիտա 3. Սածել 4. Վալե	վրացացել են վրացացել են մահմեդականացել են 18-րդ դ. վրացացել են
Ադիգենի շրջան	
5. Աբասթուման 6. Արալ 7. Բոլաջուր 8. Ուդե	վրացացել են վրացացել են վրացացել են վրացացել են
Ասպինձայի շրջան	
9. Բնելա 10. Խզաբավրա 11. Խրթվիս 12. Վարգավ	վրացացել են, գյուղը դատարկվել է վրացացել են ցրվել են 1828-29թթ. վրացացել են
Գորիի շրջան	
1. Սկրա	վրացացել են
Թելավիի շրջան	
14. Սանավարդո	վրացացել են

[20] Տե՛ս *Հակոբյան Պ.,* «Հրաւէր ողջմտութեան», Էջմիածին, 1993, էջ 132: Ըստ նույն հեղինակի, բացի հիշյալ համայնքներից, Թիֆլիս, Գորի և Քութայիս քաղաքներում վրացացել են ոչ միայն բոլոր հայ կաթոլիկները, որոնք լատինածես էին, այլև 1830-ին Կարինից ու շրջակա գյուղերից գաղթած կաթոլիկ հայերի մի մասը (նույն տեղում, էջ 132, ծանոթագրություն):

ԳԵՌԼԱՅԻ ՀԱՅԵՐԸ
(Անձնական դիտարկումներ, 1997թ.)

Արա Պապյան[1]

Ներկայացվող նյութը չի հավակնում լինել գիտական ուսումնասիրություն: Հոդվածի մեջ, որոշակի պատմական հենքի վրա, արտացոլված են 1997թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ներկայիս Ռումինիայի Գեռլա քաղաք կատարած իմ երկու այցերի և հանդիպումների դիտարկումները:

1995թ. նոյեմբերից մինչև 1997թ. սեպտեմբեր դիվանագիտական ծառայության մեջ եմ եղել Բուխարեստի Հայաստանի Հանրապետության դեսպանատանը նախ՝ որպես առաջին քարտուղար, ապա նաև՝ որպես գործերի ժամանակավոր հավատարմատար *(charge d'affaires ad interim):* 1997թ. օգոստոսի սկզբին դեսպանությունը տեղեկացվեց, որ հունգարահայերը ցանկություն են հայտնել հանդիպելու ռումինահայ համայնքի ներկայացուցիչների հետ և որպես հանդիպման վայր են առաջարկում Գեռլա քաղաքը: Քաղաքի ընտրությունը պատահական չէր: Գեռլան տեղակայված է Բուխարեստից Բուդապեշտ տանող կիսաճամփին: Սակայն ընտրության ամենակարևոր գործոնը բուն քաղաքի կարևորությունն էր երկու համայնքների համար: Քաղաքը 1920 թվականից, բացի մի կարճ ժամանակահատվածի՝ 1940-44թթ., գտնվում է Ռումինիայի կազմում, սակայն այն առնվազն մի քանի դար եղել է Ավստրո-Հունգարիայի կազմում և հանդիսացել է Տրանսիլվանիայի հայության կենտրոնը: Գեռլան մինչև 1920թ. կոչվել է Արմենոպոլիս (հայերեն՝ Հայաքաղաք, հունգարերեն՝ *Szamosújvár or Örményváros,* գերմաներեն՝ *Armenierstadt):*

Լուրն առնելուց դիմեցի Ռումինիայի խորհրդարանի անդամ, Մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահ Վարուժան Փամբուկչյանին: Նա սիրով համաձայնեց միասին այցելել Տրանսիլվանիա: Մեզ միացան նաև Ռումինիայում հայտնի գործարար Ժիրայր Գյուլբենկյանը և էլի մեկ-երկու հոգի:

Ներկայիս Ռումինիայի տարածքում հայերը զանգվածաբար բնակություն են հաստատել 14-15-րդ դարերից: Արդեն 1415թ. հայերը Սուչավայում (Մոլդովայի սահմանի մոտ) Զամկա անունով վանք ունեին: Նույն վայրերում հայերը 1512թ. կառուցել են Հաճկատար վանքը: Անվանումը ստուգաբանվում է որպես հաճույքը, ցանկությունը, ուխտը, կատարող վանք: Առ այսօր այն մեծ

[1] «Մոդուս վիվենդի» հասարակագիտական կենտրոնի ղեկավար:

ուխտատեղի է նաև ռումինացիների համար: Քանի որ վանքը հայկական է, ռումինացիները հավատում են, որ եթե վանքում դիպչեն հայերին, ապա նրանց ուխտը կկատարվի: Իմ այցերից մեկի ժամանակ, երբ քայլում էինք դեպի վանք, ռումինացի կանայք իրենց գլխաշորերն էին նետում մեր ոտքերի առաջ: Բնազդաբար մենք խուսափում էինք գլխաշորերը տրորելուց: Մեզ բացատրեցին, որ գլխաշորերը նետված են, որ քայլենք գլխաշորերի վրայով: Ռումինացիները հավատում են, որ այս ձևով հաղորդակից կլինեն հայերի հաջողությանը: Սա դարեր շարունակ ռումինացիների մեջ տարածված ավանդույթ ու հավատալիք է, քանի որ, թեև այդ վայրերում արդեն հայեր չկան, այնուհանդերձ, նրանք հիշվում են որպես մեծահարուստ և հաջողակ առևտրականներ:

Հենց այս վայրերից էլ հայերը 17–րդ դարից սկսած արտագաղթել են Տրանսիլվանիա: 1672թ. թուրքերը ներխուժել են Մոլդովա, 1683թ. գրավել Զամկա վանքը: Խուսափելով թուրքերից՝ հայերն անցել են ավելի ապահով վայր՝ Հաբսբուրգների տիրապետության տակ գտնվող Տրանսիլվանիա: Հիշեցնենք, որ հայերը Մոլդովայում էին հայտնվել Ղրիմից՝ դարձյալ խուսափելով թուրքական վայրագ տիրապետությունից: Ընդհանրապես, ըստ տեղի հայերի մեջ տարածված ավանդության, հայերի այդ հատվածը Հայաստանից արտագաղթել է 11-րդ դարում, Անիից:

Մոլդովայից հեռացած հայերը (մոտ երեք հազար ընտանիք) 1702թ. Հաբսբուրգներից տեղափոխվել են Գեռլա բնակավայր և հիմնել Արմենոպոլիս քաղաքը: Եթե Մոլդովայի հայերը առաքելական էին, ապա Գեռլայում հաստատվելուց հետո նրանք դառնում են կաթոլիկ: Կարելի է ենթադրել, որ դա Տրանսիլվանիայում հաստատվելու թույլտվության նախապայմաններից էր: Արմենոպոլսի հայոց առաջին եպիսկոպոս է դառնում Օշենտիոս Վըրզարյանը (*Auxenţiu Vărzărescu*, 1655, Բոտոշանի – 1715, Վիեննա): Մի քանի տասնամյակ տևած շինարարությունից հետո 1792թ. օծվում է հայոց Սուրբ Երրորդություն եկեղեցին:

Եկեղեցին մշտապես գործել է նաև կոմունիստների ողջ տիրապետության ընթացքում:

Իմ այցի ժամանակ եկեղեցում ժամերգություն էր ընթանում, բնականաբար, լատիներեն և հունգարերեն: Սուրբ Երրորդություն եկեղեցին գտնվում է Գեռլա քաղաքի կենտրոնական հրապարակի վրա: Այն շրջապատված է 18-19-րդ դարերի երկհարկանի տներով, այդ թվում նաև հայոց առաջնորդարանով՝ կառուցված 1761թ.: Ե՛վ եկեղեցին, և՛ առաջնորդարանը լեցուն են զանազան հնատիպ, բազմալեզու գրքերով և փաստաթղթերով: Առաջնորդարանն ունի կամարակապ ներքին բակ: Ամենահետաքրքրականն առաջնորդների յուղաներկ նկարների պատկերաշարն է: Ամենահին կտավներում պատկերված առաջնորդները մորուքավոր ու վեղարավոր են, նորերն՝ ավելի շեկ ու անմորուս:

Գեռլայի հայոց առաջնորդն իր համայնքի երկու անդամի հետ (1997թ.)

Հայկականության միակ ցուցիչը երկու խորանների առկայությունն է՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի և Սբ. Հռիփսիմեաց: Եկեղեցին բազիլիկ կառույց է: Զանգակատունն ունի 8-10 հարկանի շենքի բարձրություն: Բուն եկեղեցին շատ մեծ է և տպավորիչ: Իմ տեսած ամենամեծ հայկական եկեղեցին է: Եկեղեցու տակ կատակոմբեր են, ուր ավելի քան հարյուր տարի իրականացվել են թաղումներ: Թաղումները ոչ ավանդական ձևի են, այսինքն՝ դագաղները տեղադրված են պատերի մեջ՝ 4-5 շարքով: Թեև, ըստ ինձ ուղեկցողների, բոլոր թաղվածները հայեր էին, սակայն արձանագրությունները լատինատառ էին, անունները՝ հունգարական: Մեկ-երկու անուն կար, որոնցից կարելի էր կռահել դրանց հայկական ծագման մասին:

Եկեղեցու ներսում՝ հյուսիսային խորանի մոտ, կար մի հսկայական, դատարկ շրջանակ: Պարզվեց, որ Ռուբենսի նկարի շրջանակն է: Բուն նկարն այդ ժամանակ գտնվում էր Կլուժի պատկերասրահում: Նկարի պատմությունը հետաքրքրական է: Արմենոպոլսի հայերը ժամանակին պարտքով մեծ գումար են տվել Ավստրո-Հունգարիայի կայսրերին: Վերջիններս, չկարողանալով վերադարձնել պարտքը, որպես հատուցում 19–րդ դարի սկզբին հայերին առաջարկել են Ռուբենսի նկարը: Քանի որ Ռումինիայում օրենք էր ընդունված կոմունիստների կողմից անօրինականորեն բռնագրավված գույքի վերադարձի մասին, հորդորեցի հայերին անպայմանորեն պայքարել նկարի վերադարձի համար: Բուխարեստ վերադառնալուց հետո նկարի մասին պատմեցի ազդեցիկ հայերին և պաշտոնական գրությամբ դիմեցի Ռումինիայի մշակույթի նախարարությանը: Հետագայում գոհունակությամբ իմացա, որ նկարը վերա-

դարձվել է հայկական եկեղեցուն, և ներկայումս այն գրավել է իր դատարկ շրջանակը Սուրբ Երրորդություն եկեղեցում:

Գեռլա քաղաքի շրջակայքում կա նաև ավանդական հայկական գերեզման: Այստեղ թաղված են Եղեռնից փրկված հայերը, և տապանաքարերի վրա կարելի է հանդիպել հայերեն գրությունների ու բազմաթիվ հայկական ազգանունների: Գերեզմանն ունի մատուռ: Ընդհանրապես, Գեռլայում կա երեք հայկական եկեղեցի:

Գեռլայի շատ շենքեր մինչև հիմա ունեն հայերեն արձանագրություններ: Քաղաքում գործում էին «Արարատ» կազինոն, «Երևան» ավտոսպասարկման կենտրոնը: Քաղաքի բնակչությունը մոտավորապես 25 հազար է: Թեև պաշտոնապես քաղաքում ապրում է ընդամենը մի քանի տասնյակ հայ, այնուամենայնիվ, բնակչության առնվազն կեսը հավատացած է, որ ունի հայկական ծագում: Հիշարժան է, որ տեղացի հայերը մեծ ակնածանք ունեն, իրենց խոսքով, «իսկական հայերի» նկատմամբ: Երբ փողոցում կանգնած զրուցում էինք Վարուժան Փամբուկչյանի հետ, մեզ մոտեցավ մի ծեր կին և ներկայացավ որպես տեղացի հայ: Ասաց, որ իր նախնիները Հայաստանում ապրել են «ծովի ափին»: Իմանալով, որ ես Հայաստանից եմ, սկսեց ձեռքով շոշափել ինձ՝ ասելով, որ ինքը «մինչև հիմա չէր տեսել իսկական հայի»:

Հետաքրքրական է, որ Գեռլայի հայերը մի ճաշ են եփում, որը կոչում են «ականջապուր», սակայն չեն հասկանում այդ բառի իմաստը:

Թեև Տրանսիլվանիայի հայերն ավելի քան ինը հարյուր տարի առաջ են արտագաղթել Հայաստանից, ներկայումս ունեն հունգարական անուններ, հայախոս չեն և կաթոլիկ են (չեն պատկանում Հայ Կաթողիկե համայնքին), այսուհանդերձ, անբացատրելի մի ուժ նրանց մեջ պահել է որոշակի հայկականության գիտակցություն: Գեռլայի հայերի միության նախագահ Յան Էսցեգարի *(Janos Esztegar)* հետ գնացել էի Գեռլայի քաղաքապետի մոտ: Էսցեգարը խոսում էր քաղաքապետի հետ և ասում էր «մենք՝ հայերս», ու ես չէի կարողանում հասկանալ՝ ի՞նչն է նրան հայ պահում:

Կարծում եմ, որ առաջին գործոնը հայ լինելու հպարտությունն է: Հայերը դարեր շարունակ այնքան ազդեցիկ ու հարգված են եղել, որ ներկայումս էլ այդ տարածաշրջանում հայ լինելն ընկալվում է որպես պատկանելություն որոշակի ընտրյալ խավի: Երկրորդ գործոնը Ռումինիայի պաշտոնական քաղաքականությունն է: Ցանկանալով թուլացնել հունգարացիների ազդեցությունը նախկին Տրանսիլվանիայի վրա՝ ռումինական պետությունը խրախուսում է հունգարախոս և կաթոլիկ հոծ զանգվածի մեջ (1,8 մլն մարդ) ճեղքերի առաջացումը և ազգային խմբերի վերադարձը արմատներին: Երրորդ գործոնը հայոց պետականության առկայությունն է: Ինչպես ասաց Գեռլայի հայերից մեկը. «Ես հիմա նայում եմ քարտեզին, կարդում եմ Հայաստան անունը և գիտեմ, որ Հայաստանը կա»:

Առանց գերագնահատելու օտարախոս և այլադավան հայերի դերն ու նշանակությունը՝ անհրաժեշտ եմ համարում ընդգծել նրանց կարևորությունը հայոց պետականության շահերի առաջմղման և, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, որոշակի ծրագրերում նրանց հնարավոր ընդգրկման մասին: Ցանկացած պետություն, անկախ հզորության չափից, կարիք ունի այլ պետություններում իր նկատմամբ բարեկամաբար տրամադրված կազմակերպված խմբերի առկայության: ԽՍՀՄ-ը դա անում էր կոմունիստական կուսակցություններ ստեղծելով, ամերիկացիներն անում են զանգվածային մշակույթի տարածումով, մենք կարող ենք անել սփռված Հայության միջոցով և Հայության վերազարթոնքով:

«ՖՐԻԴԸՄ ՀԱՈՒԶ». «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ 2007-2009ԹԹ.

Կարեն Վերանյան

Երկու խոսք կազմակերպության մասին

«Ֆրիդրմ Հաուզ»-ը *(Freedom House)* հիմնվել է 1941թ. Միացյալ Նահանգներում: Ունի Հոգաբարձուների խորհուրդ, որտեղ ներգրավված են թե՛ դեմոկրատներ, թե՛ հանրապետականներ և թե՛ անկուսակցականներ: *«Freedom House»* կազմակերպությունը ֆինանսավորվում է, ինչպես անհատական նվիրատվություններից, այնպես էլ ԱՄՆ, ԵՄ կառավարություններից ստացվող դրամաշնորհներով: Հատկանշական է, որ վերջին տարիներին կազմակերպությունը դրամաշնորհներ է ստանում ԱՄՆ Զարգացման միջազգային կազմակերպությունից և Պետդեպարտամենտից՝ տարբեր նախագծերի իրականացման նպատակով:

«Անցումային պետություններ» վարկանիշային հետազոտությունը 2007-2009թթ.

«Ֆրիդրմ Հաուզ» կազմակերպությունն ավելի քան մեկ տասնամյակ իրականացնում է վարկանիշային հետազոտություն, որը նվիրված է ժողովրդավարացման գործընթացներին Եվրոպայի և Եվրասիայի 29 հետխորհրդային պետություններում: «Անցումային պետություններ» վարկանիշային հետազոտության մեթոդաբանությունը հիմնվում է 7 ենթացուցիչների հաշվարկի վրա, որոնք են՝

1. ընտրական գործընթաց
2. քաղաքացիական հասարակություն
3. անկախ ԶԼՄ
4. ազգային ժողովրդավարական կառավարում
5. տեղական ժողովրդավարական կառավարում
6. արդարադատություն և դրա անկախությունը
7. կոռուպցիա:

Ուսումնասիրությունում ներառված երկրների ժողովրդավարության վարկանիշները կազմվել են 1-7-ի սահմանում ընկած թվային հաշվարկի հիման վրա, որտեղ ցածրագույն՝ 1 միավորը ներկայացնում է ժողովրդավարության գործընթացների բարձրագույն, 7-րդ միավորը՝ վատթարագույն արդյունքը:

Հայաստանի վարկանիշն այլ երկրների շարքում

«Ֆրիդըմ Հաուզ»-ի ներկայացրած տարեկան վարկանիշային զեկույցների համեմատական վիճակագրությունից պարզ է դառնում, որ 2007-2009թթ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ երկրների շարքում ՀՀ-ն բավական բարձր ցուցանիշներ է արձանագրել՝ որպես կանոն նշված երկրների ցուցակում զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը: Նույն տրամաբանությունն է գործում նաև նախորդ՝ 2005-2006թթ. զեկույցների պարագայում, որտեղ ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում շարունակում է զբաղեցնել 4-րդ հորիզոնականը: ՀՀ-ն իր վարկանիշային ցուցանիշով զիջում է Ուկրաինային (որի վարկանիշը նշված ժամանակաշրջանում լավագույնն է համարվում ԱՊՀ երկրների շարքում), ինչպես նաև Վրաստանին և Մոլդովային[1]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս վարկանիշային արդյունքը բավական ցածր է եղել, ինչի արդյունքում այդ երկիրը ԱՊՀ երկրների ցուցակում, որպես կանոն, զբաղեցրել է հետին դիրքեր (տե՛ս *աղյուսակ 1*):

Առանձնապես կարևոր է ՀՀ վարկանիշային ենթացուցիչների ուսումնասիրման խնդիրը, որոնց համեմատական վերլուծությունը հնարավորություն կստեղծի առավել հստակ լուսաբանելու ՀՀ վարկանիշավորման հիմնական առանձնահատկությունները: Այսպես, 2007թ. տարեկան հաշվետվության համաձայն, ՀՀ-ի վարկանիշավորման ենթացուցիչների շարքում անհամեմատ բարելավված է քաղաքացիական հասարակության միավորը՝ 3,50, որին հաջորդում են արդարադատության անկախությունը (5 միավոր) և ազգային ժողովրդավարական կառավարման (5,25) ենթացուցիչները: ՀՀ-ն բավական ցածր արդյունք է արձանագրել ընտրական գործընթացների, անկախ ԶԼՄ-ի և կոռուպցիայի ցուցիչների պարագայում: Պետք է նկատել, որ 2007թ. համեմատությամբ, 2008թ. վարկանիշային զեկույցում ՀՀ-ի ցուցանիշը որակական առումով լուրջ փոփոխություններ չի գրանցել (տե՛ս *աղյուսակ 2*):

Ինչ վերաբերում է 2009թ. հաշվետվությանը, ապա այստեղ թեև ՀՀ-ն կարողացել է պահպանել ԱՊՀ երկրների շարքում իր ունեցած նախկին դիրքը (4-

[1] Պետք է նկատել, որ իրենց վարկանիշով առաջատար ԱՊՀ երկրները (Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա) հանդիսանում են ՎՈՒԱՄ անդամ երկրներ, ասել է թե դրանց վարկանիշավորման հարցում նկատելի են որոշակի քաղաքական վերապահումներ:

րդ հորիզոնական), սակայն ենթացուցիչների վարկանիշավորման հարցում որոշակի հետընթաց է ունեցել: Այսպես, 2008թ. համեմատությամբ բարելավում է նկատվել միայն մեկ՝ կոռուպցիա ենթացուցչի պարագայում, պահպանվել է նաև տեղական ժողովրդավարական կառավարման նախորդ ցուցանիշը, մնացած բոլոր ենթացուցիչներով ՀՀ-ի վարկանիշը հետընթաց է ունեցել: 2009թ. ենթացուցիչների վարկանիշավորման հարցում արձանագրված բացասական միտումներն անդրադարձել են այդ տարվա ՀՀ-ի ամփոփ վարկանիշի վրա, որը կազմելով 5,39 միավոր՝ զիջել է նախորդ տարիների դիրքերը (2007-2008թթ. գրանցվել էր միևնույն՝ 5,21 միավոր) (տե՛ս *աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Հայաստանի վարկանիշն այլ երկրների շարքում, 2007թ.[2]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդա-վար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3	2,75	3,75	4,75	5,25	4,50	5,75	**4,25**
Վրաստան	4,50	3,50	4	5,50	5,50	4,75	5	**4,86**
Մոլդովա	3,75	3,75	5,25	5,75	5,75	4,50	6	**4,96**
Հայաստան	5,75	3,50	5,75	5,25	5,50	5	5,75	**5,21**
Ղրղզստան	5,75	4,50	5,75	6	6,25	5,50	6	**5,68**
Ռուսաստան	6,50	5,25	6,25	6	5,75	5,25	6	**5,86**
Տաջիկստան	6,50	5	6,25	6,25	5,75	5,75	6,25	**5,96**
Ադրբեջան	6,50	5,25	6,25	6	6	5,75	6,25	**6**
Ղազախստան	6,50	5,75	6,75	6,75	6,25	6,25	6,50	**6,39**
Բելառուս	7	6,50	6,75	7	6,50	6,75	6,25	**6,68**
Ուզբեկստան	6,75	7	7	7	6,75	6,75	6,50	**6,82**
Թուրքմենստան	7	7	7	7	7	7	6,75	**6,96**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,50	2,50	2,25	2,25	1,75	3	**2,14**
Բուլղարիա	1,75	2,50	3,50	3	3	2,75	3,75	**2,89**
Ռումինիա	2,75	2,25	3,75	3,50	3	3,75	4	**3,29**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	2	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,96**
Լատվիա	2	1,75	1,50	2	2,50	1,75	3	**2,07**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,50	2,50	1,75	4	**2,29**

[2] 2007թ. զեկույցը հիմնվում է 2006թ. տվյալների վրա։

Աղյուսակ 2

Հայաստանի վարկանիշն այլ երկրների շարքում, 2008թ.[3]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդավար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3	2,75	3,50	4,75	5,25	4,75	5,75	**4,25**
Վրաստան	4,75	3,50	4,25	5,75	5,50	4,75	5	**4,79**
Մոլդովա	3,75	3,75	5,50	5,75	5,75	4,50	6	**5**
Հայաստան	5,50	3,50	5,75	5,25	5,50	5,25	5,75	**5,21**
Ղրղզստան	6	4,50	6	6,25	6,50	6	6,25	**5,93**
Ռուսաստան	6,75	5,50	6,25	6,25	5,75	5,25	6	**5,96**
Ադրբեջան	6,50	5,25	6,25	6	6	5,75	6,25	**6**
Տաջիկստան	6,50	5,50	6	6,25	6	6	6,25	**6,07**
Ղազախստան	6,75	5,50	6,75	6,75	6,25	6,25	6,50	**6,39**
Բելառուս	7	6,50	6,75	7	6,75	6,75	6,25	**6,71**
Ուզբեկստան	7	7	7	7	6,75	6,75	6,50	**6,86**
Թուրքմենստան	7	7	7	7	6,75	7	6,75	**6,93**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,50	2,50	2,25	2,25	1,75	3	**2,14**
Բուլղարիա	1,75	2,50	3,50	3	3	2,75	3,50	**2,86**
Ռումինիա	2,75	2,25	3,75	3,75	3	4	4	**3,36**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	1,75	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,93**
Լատվիա	2	1,75	1,75	2	2,25	1,75	3	**2,07**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,50	2,50	1,75	3,75	**2,25**

[3] 2008թ. զեկույցը հիմնվում է 2007թ. տվյալների վրա։

Աղյուսակ 3

Հայաստանի վարկանիշն այլ երկրների շարքում 2009թ. [4]

Երկիր	Ընտրակ. գործընթաց	Քաղաքաց. հասարակութ.	Անկախ ԶԼՄ	Ազգային ժողովրդավար. կառավարում	Տեղական ժողովրդավար. կառավարում	Արդարադատ. անկախութ.	Կոռուպցիա	Ժողովրդավար. միավորը
ԱՊՀ երկրներ								
Ուկրաինա	3,50	2,75	3,50	5	5,25	5	5,75	**4,39**
Վրաստան	5,25	3,75	4,25	6	5,50	4,75	5	**4,93**
Մոլդովա	4	3,75	5,75	5,75	5,75	4,50	6	**5,07**
Հայաստան	5,75	3,75	6	5,75	5,50	5,50	5,50	**5,39**
Ղրղզստան	6	4,75	6,25	6,50	6,50	6	6,25	**6,04**
Ռուսաստան	6,75	5,75	6,25	6,50	5,75	5,50	6,25	**6,11**
Տաջիկստան	6,50	5,75	6	6,25	6	6,25	6,25	**6,14**
Ադրբեջան	6,75	5,50	6,75	6,25	6,25	5,75	6,50	**6,25**
Ղազախստան	6,75	5,50	6,50	6,75	6,25	6	6,50	**6,32**
Բելառուս	6,75	6,25	6,75	6,75	6,75	6,75	6	**6,57**
Ուզբեկստան	7	7	7	7	6,75	7	6,50	**6,89**
Թուրքմենստան	7	7	7	7	6,75	7	6,75	**6,93**
Արևելյան Եվրոպայի երկրներ								
Հունգարիա	1,75	1,75	2,50	2,50	2,50	1,75	3,25	**2,29**
Բուլղարիա	1,75	2,50	3,75	3,25	3	3	4	**3,04**
Ռումինիա	2,50	2,50	3,75	3,75	3	4	4	**3,36**
Մերձբալթյան երկրներ								
Էստոնիա	1,50	1,75	1,50	2,25	2,50	1,50	2,50	**1,93**
Լատվիա	2	1,75	1,75	2,50	2,25	1,75	3,25	**2,18**
Լիտվա	1,75	1,75	1,75	2,75	2,50	1,75	3,75	**2,29**

[4] Վարկանիշավորումը վերաբերում է 2008թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածին։

«ԳԼՈԲՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 24.11.2009թ.
Թիվ 6 (10), 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 3 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում